2024, ՆՈՅԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 22 (666)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մայր Աթոռում կատարվեց սարկավագների ընծայման կարգը

Նոյեմբերի 23-ին Միածնաէջ Մայր տաճարում կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարբեր կառույցներում և թեմերում սպասավորող վեց սարկավագների ընծայման կարգը՝ ձեռամբ Արթիկի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Ավագյանի:

Հաջորդ օրը նորընծաները Մայր տաճարում արժանացան քահանայական օծման ու ձեռնադրության:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորաօծ եկեղեցականներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոյեմբերի 26-ին ընդունեց Միածնաէջ Մայր տաճարում օրեր առաջ քահանայական կոչման արժանացած 6 եկեղեցականներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանի և Արթիկի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Ավագյանի:

Հանդիպմանը հայր Հարությունն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց նորաօծներին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունն ու պատգամը ձեռնադրյալներին: Նարեկ սրբազանն իր հերթին երախտագիտություն հայտնեց Հայոց Հովվապետին՝ քահանայական ձեռնադրություն կատարելու պատվին արժանացնելու համար:

Այնուհետև քահանայական ձեռնադրության առիթով հոգևորականներին շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բերելով նրանց իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները:

Վեհափառ Հայրապետը հորդորեց նորաօծ քահանա հայրերին լինել արժանավոր եկեղեցականներ, իրենց նվիրյալ ծառայությամբ բարձր պահել

Հայոց Եկեղեցու բարի համբավն ու հեղինակությունը, զորացնել հայորդիների սրտերում աստվածսիրությունը, հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը: Հայոց Հովվապետը ձեռնադրյալներին պատգամեց հոգեխնամ ու կրթադաստիարակչական գործունեությամբ նպաստել հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց ձեռնադրող Նարեկ սրբազանին, ինչպես նաև Մայր Աթոռի հոգևոր կրթական հաստատությունների տեսչությանն ու լուսարարապետությանը՝ եկեղեցականների պատրաստության և ձեռնադրության գործում ներդրած ջանքերի համար:

Վերջում Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց քահանա հայրերին՝ մաղթելով արդյունաշատ հոգևոր առաքելություն:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նոյեմբերի 24-ին Միածնաէջ Մայր տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, հընթացս սուրբ պատարագի՝ կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Պատարագիչն էր Արթիկի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Ավագյանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրության և օծման արժանացավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում և թեմերում սպասավորող վեց սարկավագ: Սուրբ պատարագի ընթացքում Նարեկ սրբազանը, քահանայության կոչելով նորընծաներին, սրբալույս մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը, ինչպես նաև նորաօծ եկեղեցականներին շնորհեց հոգևոր նոր անուններ:

Տիգրան սրկ. Սարգսյանը վերակոչվեց Տ. Նարեկ քահանա, Գալուստ սրկ. Վարդանյանը՝ Տ. Երեմիա քահանա, Կարեն սրկ. Սարգսյանը՝ Տ. Վիրապ քահանա, Արեգ սրկ. Մխիթարյանը՝ Տ. Մաշտոց քահանա, Դավիթ սրկ. Ստեփանյանը՝ Տ. Աբել քահանա, Արման սրկ. Բաղումյանը՝ Տ. Արամ քահանա: Այնուհետև նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին:

Սրբազան հայրը, իր քարոզում անդրադառնալով քահանայության խորհրդին և դիմելով նորաօծ քահանաներին, նշեց. «Քահանայի առաքելությունն է նվիրումով ու սիրով իրականացնել իր ծառայությունը ժողովրդի զավակներին: Ավետարանն էլ հենց դրա մասին է ասում. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու և կույրերին՝ տեսողություն, կեղեքվածներին ազատ արձակելու, Տիրոջը ընդունելի տարին հռչակելու» (Ղուկ. Դ 18–19): ....Մեր նորաօծ քահանաներն այդ պատասխանատվությունը հանձն առան՝ լինելով աստվածային ճշմարտության հուշարարն ու լուսարարը, Տիրոջ խոսքի մատակարարն ու մատռվակը»:

Սրբազան հայրն անդրադարձ կատարեց նաև հոգևոր ծառայության ընթացքում հանդիպող դժվարություններին: Այս առնչությամբ Նարեկ եպիսկոպոսը հորդորեց նորաօծ քահանա հայրերին քաջությամբ կրել իրենց վիճակված խաչը՝ ապավինելով Տիրոջ զորությանը:

«Ձեր քահանայագործության ընթացքում կլինեն սպասումի, վախի, տառապանքի օրեր, կունենաք նաև մխիթարության ու երանության զգացումներ, սակայն յուրաքանչյուր օրվա մեջ Աստծու սերը մշտապես կուղեկցի ձեզ, որով կկարողանաք հաղթահարել սպասումի անձկությունը, վախի տագնապը, տառապանքի փուշը և զվարճանքի պղպջակային խաբուսիկությունը: Ահա ձեր ճշմարիտ ծառայության գաղտնիքը. սեր, որ պիտի ստանաք Աստծուց և բաշխեք ժողովրդին»,– նշեց պատարագիչ սրբազանը:

Վերջում Նարեկ եպիսկոպոսը հայցեց ամենքի զորակցությունը, որպեսզի նորաօծ քահանաներն իրենց վիճակված դժվարին ճանապարհը կարողանան անցնել արդարությամբ ու ճշմարտությամբ՝ Տիրոջ առջև անվարան կերպով աղաղակելով՝ «Ահավասիկ ես և մանկունքն իմ»:

➥ էջ 2

Կատարվեց Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների նախատոնակը

Նոյեմբերի 29-ին՝ երեկոյան ժամերգության ավարտին, Միածնաէջ Մայր տաճարում կատարվեց հայոց առաջին լուսավորիչներ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների նախատոնակը, որի ընթացքում դուրս բերվեցին սրբերի մասունքները:

Ի Տեր հանգավ Տ. Գարեգին արք. Բեկչյանը

Ցավով տեղեկացնում ենք, որ նոյեմբերի 21-ին՝ կյանքի 82-րդ տարում, ծանր հիվանդությունից վախճանվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Տ. Գարեգին արք. Բեկչյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռի միաբանությունը խորապես սգում են բազմավաստակ Գարեգին սրբազանի մահը՝ աղոթելով երջանկահիշատակ սրբազան հոր հոգու հանգստության և խաղաղության համար:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Կենսագրություն

Ծնվել է 1942 թ. Կոստանդնուպոլսում (Թուրքիա): Ավազանի անունը՝ Տիգրան:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Վիեննական Մխիթարյան վարժարանում:

1956 թ. — սովորել է Կոստանդնուպոլսի Ս. Խաչ դպրեվանքում:

1962 թ. — սովորել է Կոստանդնուպոլսի համալսարանում:

1968 թ. — սովորել է Բոննի համալսարանում (Գերմանիա):

1969 թ. — սովորել է Բոխի համալսարանում:

1963 թ. — ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Շնորհք արք. Գալուստյանի:

1965 թ. — ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Շնորհք արք. Գալուստյանի:

1970 թ. — ստացել է մասնավոր վարդապետության 4 աստիճան՝ ձեռամբ Տ. Շնորհք արք. Գալուստյանի:

1992 թ. — ստացել է ծայրագույն վարդապետության աստիճան՝ ձեռամբ Տ. Գարեգին արք. Գազանճյանի:

1992 թ. — ձեռնադրվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1998 թ. — ստացել է արքության պատիվ՝ ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1973—1976 թթ. — ծառայել է Մարսելի (Ֆրանսիա) Ս. Կարապետ հայկական եկեղեցում՝ որպես հոգևոր հովիվ:

1976—1994 թթ. — ծառայել է Մարսելի Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցում՝ որպես հոգևոր հովիվ:

1992—1998 թթ. — եղել է Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ:

2014—2019 թթ. — եղել է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

2017—2019 թթ.— եղել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության պատրիարքական տեղապահ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց հայոց առաջին լուսավորիչների տոնը

Նոյեմբերի 30-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց հայոց առաջին լուսավորիչներ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների տոնը:

Դեռևս 2014 թվականին տոնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով հռչակվել է Աստվածամուխ սուրբ գեղարդի ուխտի օր:

Այդ օրը հավատացյալների օրհնության համար դուրս է բերվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող համաքրիստոնեական սրբությունը:

Բերկրառատ տոնի առիթով, Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը:

Սուրբ պատարագին ներկա էին Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ հայաստանյան թեմերի առաջնորդներ և բազմաթիվ ուխտավորներ:

Սուրբ պատարագի ընթացքում եկեղեցական թափորի առաջնորդությամբ, Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ, Մայր տաճար բերվեց աստվածամուխ սուրբ գեղարդը:

Անդրադառնալով Հայոց աշխարհի առաջին լուսավորիչների տոնի խորհրդին՝ հայր սուրբն ընդգծեց առաքյալների դերակատարությունը մարդկության պատմության և հայկական իրականության մեջ, որոնց քարոզության շնորհիվ Քրիստոսի սիրո վարդապետության հունդերը ոչ միայն սերմանվեցին Հայոց հողում, այլև հետագայում պտղաբերեցին և դարձան մեր ինքնության անբաժանելի մասը: «Այսօր նվիրական օր է Հայոց Եկեղեցու և նրա անդամների համար, քանզի եկել ենք միասնաբար հայցելու Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի բարեխոսությունը Տիրոջ մոտ Հայկ Նահապետի սերնդի համար, վերանորոգելու մեր ուխտը Հայոց Եկեղեցու և նրա գահակալի հանդեպ՝ առավել նախանձախնդրությամբ և նվիրումով լծվելով հայոց պետականության զորացման սրբազան առաքելությանն ու ազգային-քրիստոնեական ինքնության պահպանությանը: Երբեք չմոռանաք, որ լինել առաքելական նշանակում է վերահաստատել հավատարմությունը Տիրոջ, Աստծու խոսքի և Մայր Եկեղեցու հանդեպ՝ մեր լուսավոր նախնիների նման անաղարտ պահելով ուղղափառ հավատքը և ամենուր սփռելով հարության լույսն ու հույսը»,— նշեց հայր Զաքարիան:

Սուրբ պատարագի ավարտին Հայոց Հովվապետը «Պահպանիչ» աղոթքով և հրաշագործ սուրբ գեղարդով օրհնեց ներկա ժողովրդին, ապա հավատացյալներին հնարավորություն ընձեռվեց երկրպագելու ու համբուրելու համաքրիստոնեական սրբությունը:

Աստվածամուխ սուրբ գեղարդը Մայր տաճարում մնաց մինչև երեկոյան ժամերգության ավարտը:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

➥ էջ 1

Ապա Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հոգևորականաց դասը բարձրացան Սուրբ Խորան, շնորհավորեցին քահանաներին և համբուրեցին վերջիններիս մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալով անդրանիկ «Ողջույնը»:

Նույն օրը՝ երեկոյան, Մայր տաճարում կատարվեց վեղարի տվչության արարողություն:

Տ. Վիրապ և Տ. Մաշտոց քահանաները վեղար ստացան ու համալրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը:

Նորաօծ քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանցկացնեն քառասնօրյա պատրաստության և աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում և թեմերում:

Կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ազգային բարերար տիար Ջերարդ Թրբանճյանի թաղման կարգը

Նոյեմբերի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ազգային բարերար տիար Ջերարդ Թրբանճյանի թաղման կարգը:

Արարողությանը ներկա էին հանգուցյալի ընտանիքի անդամները, հարազատները, մտերիմները, ինչպես նաև ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության անդամներ ու Մայր Աթոռի միաբաններ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր ցավակցությունը բերելով ներկաներին, անդրադարձավ հայրենանվեր, եկեղեցասեր հայորդու՝ լուսահոգի տիար Ջերարդ Թրբանճյանի վաստակին և նրա ազգաշահ իրագործումներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Գերագույն հոգևոր խորհուրդ —100

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարբեր կառույցների կողմից հրապարակվող պաշտոնական հաղորդագրություններին պարբերաբար հետևող յուրաքանչյուր ոք հաճախ է լսում «Գերագույն հոգևոր խորհուրդ» անունով մարմնի, նրա կողմից անցկացվող նիստերի և ընդունած որոշումների մասին: Շատերը, սակայն, հավանաբար տեղյակ չեն այս կառույցի, հատկապես նրա ստեղծման շարժառիթների, նաև կառուցվածքային փոփոխությունների, իրավասությունների մասին: Գերագույն հոգևոր խորհրդի հիմնման 100-ամյակը թերևս հարմար առիթ է՝ հակիրճ անդրադառնալու վերոնշյալ հարցերին, նաև խորհրդի գործունեության որոշ հայեցակետերի:

Նշենք, որ «Էջմիածին» ամսագրի 1984 թ. Ժ համարում անդրադարձներ կան Գերագույն հոգևոր խորհրդին՝ կառույցի ստեղծման 60-ամյակի առիթով, հրատարակվել է նաև Ամենայն Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գերագույն հոգևոր խորհուրդ հաստատելու մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդն ստեղծվել է 1924 թ. հունվարի 1-ին՝ Ամենայն Հայոց Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի նախաձեռնությամբ և տնօրինությամբ: Դրան նախորդող շրջանում Ռուսական կայսրության իշխանությունների կողմից Հայոց Եկեղեցու կառավարման համակարգում կարևոր մարմին էր Սինոդը (1837—1917), որի փոխարեն էլ, ըստ էության, ստեղծվեց այս նոր կառույցը՝ հաշվի առնելով ստեղծված հասարակական-քաղաքական նոր իրողությունները, մասնավորապես՝ եկեղեցու անջատումը պետությունից՝ ըստ 1922 թ. փետրվարի 2-ին հաստատված Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրության: Գևորգ Ե Հայրապետը կոնդակում մասնավորապես շեշտում է, որ իր հայրապետության շրջանում տեղի ունեցած զանազան «իրադարձութիւնք և հանգամանք ցաւալիք, աղետաբեր պատերազմք և խռովութիւնք աշխարհիս մերում» անհնարին դարձրին Ազգային-եկեղեցական ժողովի ընտրված պատգամավորների հավաքը, և անորոշ վիճակի մեջ մնացին շուտափույթ կարգավորում պահանջող բազմազան հարցեր: Այս և այլ հանգամանքներով պայմանավորված, հաշվի առնելով նաև Մայր Աթոռի միաբանության, թեմական առաջնորդների կողմից ստացված գրությունները՝ Գևորգ Ե-ն «անհրաժեշտ և անհետաձգելի» է համարում «ժամանաւորապէս, մինչ զկազմակերպումն ազգային-եկեղեցական ժողովոյ» Գերագույն հոգևոր խորհրդի հիմնումը: Կաթողիկոսի նախագահությամբ ստեղծված այս մարմնի 6 անդամ նշանակվեց «փոր-ձառու արքեպիսկոպոսներից և եպիսկոպոսներից», իսկ ի պաշտոնե ԳՀԽ-ի անդամներ համարվեցին Հայ Եկեղեցու բոլոր թեմական առաջնորդները: Ըստ նույն կոնդակի՝ ԳՀԽ-ն իրավասություն ուներ Հայաստանյայց Եկեղեցու ներքին և արտաքին թեմերի կրոնական, վարչական և տնտեսական բոլոր տեսակի հարցերը քննարկելու և դրանց վերաբերյալ վճիռ կայացնելու: Կոնդակի վերջին կետով շեշտվում է, որ նոր ստեղծվող ԳՀԽ-ն, ըստ հնարավորության և հանգամանքների, պարտավոր է արագացնել Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպումը՝ «ստանալով ի բարեպատեհ ժամանակի զթոյլատուութիւն ի Խորհրդային իշխանութենէ Հայաստանի»:

Ինչպես հայտնի է, խորհրդային իշխանությունները թույլ տվեցին Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը 1932 թ.՝ նոր կաթողիկոսի ընտրության համար: Նույն օրվա թիվ 2 կոնդակով «վշտալի» հայրապետը սահմանեց նորաստեղծ Գերագույն հոգևոր խորհրդի կազմը, իր բացակայության պարագայում նախագահողի հարցը, խորհրդի իրավասությունները, առաջնահերթությունները և խորհրդի դիվանի ու գործավարության հետ կապված հարցեր. Սինոդը և Հայրապետական դիվանը միավորվում էին՝ ԳՀԽ-ի գործերը հսկողության տակ վարելու պայմանով: Հունվարի 2-ից արդեն խորհուրդը գումարել է անդրանիկ նիստը և սկսել գործել անգամ կաթողիկոսի բացակայության պարագայում, երբ նա վատառողջ էր:

Գևորգ Ե Սուրենյանց Հայրապետի այս նախաձեռնությունը ողջունվել է ներքին և արտաքին՝ Սփյուռքի թեմերի ներկայացուցիչների կողմից: Մասնավորապես, «Էջմիածին» ամսագրի նույն համարում հրատարակվել է այդ ժամանակ Եգիպտոսի թեմի առաջնորդ (հետագայում՝ Երուսաղեմի հայոց պատրիարք) Թորգոմ եպս. Գուշակյանի ողջույնի գիրն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ուր նա տեղեկացնում էր հայրապետական կոնդակի՝ թեմական ժողովի ու բոլոր հավատացյալների առջև հանրային ընթերցման մասին և ուրախություն հայտնում՝ ըստ մեր ազգի ու կրոնի «բնիկ օրինօք և կանոնիւք» Եկեղեցին կառավարելու հնարավորության համար: Նա նաև նշում է. «Ակն ունիմք զի ի շնորհս ջանից Վեհիդ մի յապաղեսցի և գումարումն ընդհանրական ժողովոյ, որ վերստին կանգնեալ ուղղեսցէ զցանկ հայրենի աւանդից և հաստատեսցէ զշինուած օրինաց Հայաստանեայց սուրբ և ուղղափառ Եկեղեցւոյ, ընդ հովանեաւ մեծի և պատուական Հայրապետիդ մերոյ»:

Գերագույն հոգևոր խորհուրդն ստեղծումից կարճ ժամանակ անց իսկ առիթ ունեցավ Հայ Եկեղեցու համար կարևոր հարցեր քննարկելու և էական դեր ունեցող որոշումներ կայացնելու: Այսպես, օրինակ, 1925 թ., անհանգստացած Գևորգ Ե Կաթողիկոսի առողջական վիճակով, Գերագույն հոգևոր խորհուրդը փորձում է Խորհրդային Միության կողմից անվավեր ճանաչված «Պոլոժենիան» փոխարինել կաթողիկոսական ընտրությունների նոր կանոնակարգով: 1925-ի հոկտեմբերի 22-ին Գևորգ Ե Կաթողիկոսի կողմից առաջին անգամ հաստատվում է կաթողիկոսական ընտրությունների համար կազմված նոր կանոնակարգ, որը սահմանում է ժողովի իրավասությունների շրջագիծը (Էջմիածին, 2014, ԺԱ, էջ 20):

Ժամանակի ընթացքում ԳՀԽ-ն կրել է կառուցվածքային փոփոխություններ, իսկ 1938—1945 թթ. ընդհանրապես կազմալուծված է եղել: Այսպես՝ նորընտիր Գևորգ Զ Չորեքչյան Հայրապետը 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովի հաստատմանը ներկայացրեց ԳՀԽ-ի նոր կազմը, որում հոգևորականներից բացի՝ ընդգրկված էին նաև աշխարհականներ՝ ակադ. Ս. Մալխասյանը, բժիշկ Հ. Եղիազարյանը, երկրաբան Ս. Կամսարականը և բանասեր Ե. Շահազիզը:

Վազգեն Ա Պալճյան Հայրապետը ևս տարբեր առիթներով բարձր է գնահատել և կարևորել ԳՀԽ-ի օգտակարությունը՝ իբրև խորհրդատուի և կաթողիկոսին գործակից մարմնի: Տարբեր տարիների ԳՀԽ-ի անդամներ են եղել նշանավոր հոգևորականներ՝ Խորեն արք. Մուրադբեկյանը, Գևորգ արք. Չորեքչյանը, Վազգեն եպս. Պալճյանը, Գարեգին արք. Հովսեփյանը, ինչպես նաև հանրաճանաչ խորհրդահայ մտավորականներ՝ Ստեփան Կամսարականը, Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը, Աշոտ Աբրահամյանը, Գրիգոր Խանջյանը և ուրիշներ: 2002 թ. դրությամբ ԳՀԽ-ն կազմված էր 11 հոգևորական և 5 աշխարհական անդամներից (Քրիստոնյա Հայաստան, հանր., Ե., 2002, էջ 211):

Ինչպես տեղեկանում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական կայքից, «Գերագույն հոգևոր խորհուրդը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իշխանության գործադիր բարձրագույն մարմինն է: ԳՀԽ-ի նախագահը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է: Երուսաղեմի Հայոց Պատրիարքը և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքը ի պաշտոնե ԳՀԽ-ի ատենապետներն են: Խորհուրդը կազմված է բարձրաստիճան հոգևորական և աշխարհական անդամներից, որոնց մի մասն ընտրվում է Ազգային-եկեղեցական ժողովի կողմից, մյուս մասը նշանակվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ»: Բացի նախագահից և ատենապետներից՝ ԳՀԽ-ի կազմը ներկայում բաղկացած է 14 հոգևորական և 6 աշխարհական անդամներից: Ունենալով ոչ մեծ կազմ և ըստ այդմ լինելով բավականին ճկուն կառույց՝ ԳՀԽ-ն, կարծում ենք, ըստ հարկի կարող է կառուցվածքային փոփոխություններ կրել հետագայում ևս՝ հաշվի առնելով Հայաստանյայց Եկեղեցու առջև ժամանակի ընթացքում ծառացող մարտահրավերները:

Գառնիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պ. գ. թ.

Պղծվում և ոչնչացվում է մեր հազարամյա մշակույթը.

Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը ելույթով է հանդես եկել

Հռոմի Սուրբ Թովմա Ակվինացու անվան քահանայապետական համալսարանում նոյեմբերի 18—19-ը տեղի է ունեցել միջազգային համաժողով՝ նվիրված Արցախի մշակութային ժառանգության պահպանությանը: Այն կրում էր «Սրբազան հողեր, ընդհանուր տեսլական» խորագիրը («Sacred Grounds, Shared Vision»):

Համաժողովը կազմակերպել էին Սուրբ Աթոռում Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցչությունը և Անգելիկումի էկումենիկ հետազոտությունների ինստիտուտը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության հովանավորությամբ:

Համաժողովին իր մասնակցությունն էր բերել Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը, որն իր ողջույնի խոսքն է փոխանցել համաժողովի մասնակիցներին:

Վրթանես սրբազանը անդրադարձ է կատարել տարածաշրջանում տեղի ունեցած պատերազմին և բռնի տեղահանությանը, ինչը խախտել է այն հազարամյա ներդաշնակությունը, որ տիրում էր տարածաշրջանում՝ արցախցիների տեղաբնակությամբ պայմանավորված:

Սրբազան հայրը ժողովականների ուշադրությունը հրավիրել է այն փաստի վրա, որ ներկայումս պղծվում և ոչնչացվում է մեր հազարամյա մշակույթը, ինչն ստեղծվել է նվիրական հավատքի և քրտնաջան աշխատանքի շնորհիվ, հիշեցրել և կոչ է արել, որ գիտական միտքը պիտի դառնա գերիշխող քաղաքական մտքի նկատմամբ, որպեսզի արդարությունը տեսանելի լինի:

Վրթանես սրբազանը նաև կոչ է արել քրիստոնյա աշխարհին՝ աղոթել և գործել տարածաշրջանում խաղաղության պահպանման համար:

Ամփոփելով իր խոսքը՝ սրբազան հայրը շնորհակալություն է հայտնել համաժողովի կազմակերպիչներին՝ մասնավորաբար Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պարսամյանին, որից հետո ընթերցել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը:

Համաժողովին ելույթ է ունեցել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պարսամյանը: Համաժողովին ներկա հոգևորականներն ընթերցել են կարդինալ Կուրտ Քոխի, կարդինալ Կլաուդիո Գուջերոտտիի և կարդինալ Խոսե Տոլենտինո դե Մենդոնսայի ողջույնի խոսքերը:

Ելույթով հանդես են եկել Արցախի թեմական խորհրդի անդամ Արմինե Ալեքսանյանը՝ «Հակամարտության գոտիներում մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության դիվանագիտական և այլ միջոցներ. ինչ կարելի է անել դրանք ընդլայնելու համար» թեմայով, և պ. գ. դ., պրոֆ. Համլետ Պետրոսյանը՝ «Հուշարձանների ներկայիս վիճակը Արցախում» թեմայով:

Համաժողովում զեկույցներով հանդես են եկել նաև մի շարք այլ փորձագետներ Եվրոպայից, ԱՄՆ-ից, Հայաստանից և Մերձավոր Արևելքից:

Արցախի թեմ

Հիսնակ

Պահքը ապաշխարության, խոնարհության և ինքնամաքրման միջոց է: Աստվածաշունչը պահքի մասին խոսում է որպես սրբության և հնազանդության կարևոր դրսևորման: Դրա մասին մի քանի առանցքային օրինակ կա թե Հին, թե Նոր Կտակարաններում:

Հին Կտակարանում լավագույն օրինակներից է Մովսեսի պահքը: Մովսեսը 40 օր պահք պահեց Սինա լեռան վրա, մինչև կստանար տասը պատվիրանները (Ելք 34:28): Մեկ այլ օրինակ առկա է Հովնան մարգարեի գրքում, երբ Նինվե քաղաքի բնակչությունը թագավորի հետ միասին պահք պահեց և փրկվեց (Հովնան 3:5—10): Պահքի չափազանց ազդեցիկ օրինակ է Հիսուսի պահքն անապատում (Մատթ. 4:1—2): Հիսուսին հետևելով՝ առաքյալները պահք էին պահում կարևոր որոշումներ կայացնելուց առաջ (Գործք 13:2—3, 14:23):

Առաջնային մի հանգամանք կա, որի մասին խոսում է Հիսուս. պահքը պետք է լինի անկեղծ և ոչ ցուցադրական: Պահքի նպատակն է՝ ամրապնդել մարդու և Աստծո միջև եղած հոգևոր կապը: Սովորաբար, պահք պահող մարդիկ կենտրոնանում են աղոթքի մեջ և առավել շատ փորձում մերձենալ Աստծուն: Պահքը լավագույն հնարավորությունն է՝ մեղքերը գիտակցելու և զղջալու: Որոշ մարմնական ցանկություններից հրաժարումը սովորեցնում է կարգապահություն և խոնարհություն: Հրաժարվելով վատ սովորություններից՝ մարդն ունենում է հոգևոր աճ:

Հայ Եկեղեցում պահքը կարող է ունենալ տարբեր տևողություն: Նախ՝ յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում՝ բացառությամբ Սուրբ Հարությունից հետո 50 օրվա, ամեն չորեքշաբթի և ուրբաթ պահք է: Ապա՝ կան որոշ կարևոր տոներ, որոնցից առաջ մեկ շաբաթ պահք է սահմանված: Իսկ մեծ պահք նախատեսված է տարեկան երեք անգամ: Այսօր դրանցից միայն մեկն է պահվում՝ Սուրբ Հարության տոնից առաջ՝ 50 օր: Մյուս երկուսը պահվում են մասամբ: Դրանցից մեկը Սուրբ Պայծառակերպության պահքն է, իսկ մյուսը սահմանված է եղել Սուրբ Ծննդից առաջ եղած 50 օրերի համար: Այս 50-օրյա շրջանը կոչվում է Հիսնակ:

Այսօր այս պահքի՝ Հիսնակի շրջանը բաժանված է երեք շաբաթապահքերի՝ առաջին, միջին և վերջին շաբաթների համար: Սրանցից առաջին շաբաթվա ավարտին Սուրբ Գրիգոր Սքանչելագործի, Նիկողայոս Հայրապետի և Մյուռոն եպիսկոպոսի հիշատակության օրն է: Երկրորդ շաբաթապահքը, որը երկու շաբաթ հետո է, ավարտվում է Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի, Մարուքե ճգնավորի և Մելիտոս եպիսկոպոսի հիշատակությամբ: Այդ պատճառով այս շաբաթապահքը շատ հաճախ անվանում են Հակոբի պահք: Իսկ վերջինը Սուրբ Ծննդից մեկ շաբաթ առաջ է սկսվում: Այս պահքի ամբողջ նպատակն է՝ հավատացյալին մարմնապես և հոգեպես պատրաստել Քրիստոսի Սուրբ Ծննդյան ու Աստվածհայտնության տոնին: Այստեղից էլ պարզ է, որ իր լրումին է հասնում հունվարի 5-ին՝ ճրագալույցի պատարագով: Սովորաբար, այդ օրը՝ երեկոյան, պահքն ամբողջությամբ չեն վերջացնում, այլ մասամբ՝ օգտագործելով ձու և ձուկ: Իսկ հունվարի 6-ին Սուրբ Ծննդյան ավետիսով ամբողջությամբ ավարտվում է պահքը, որից հետո ութ օր շարունակ եկեղեցում տոնական օրեր են:

Մայիս սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Եկեղեցին և արհեստական բանականությունը

Հարցազրույց Տ. Ղևոնդ ավագ քհն. Մայիլյանի հետ

— Տե՛ր հայր, արհեստական բանականությունն արդեն մուտք է գործել և շարունակում է ծավալվել արդի իրականության մեջ՝ ժամանակակից տեխնոլոգիաների հետ միասին: Ի՞նչ վտանգ է ներկայացնում, և արդյո՞ք 21-րդ դարում այն կարող է գրավել մարդկանց գիտակցական աշխարհը և դրանով վերջ դնել քաղաքակրթությանը:

— Արդի ժամանակներում արհեստական բանականությունը մեծ թափով ու արագությամբ մտնում է մարդկային կենցաղի զանազան բնագավառներ, աստիճանաբար փոխում մեր իրականությունը՝ այն դարձնելով ավելի ու ավելի արհեստական, հետզհետե վերացնելով *«բիոէթիկա»* հասկացությունը: Պարզ է, որ այս դարում հիմնական բևեռացումը՝ քաղաքակրթական առումով, պետք է լինի հենց արհեստական բանականությունը:

Անշուշտ, անասելի է արհեստական բանականության դերը ժամանակակից աշխարհում, հատկապես մեզ մոտ՝ Հայաստանում, ուր կարելի է թե՛ գրական, թե՛ գիտական աշխարհում, համացանցում կամ իրականության մեջ արհեստական բանականության կիրառման և օգտակարության մասին, մանավանդ բանկային և ֆինանսա-հաշվապահական ոլորտներում, գտնել զանազան աշխատություններ, հայերեն բանավեճեր՝ մասնագիտական առումով բավականին արդիական: Ի միջի այլոց, ավելացնեմ, որ դեռևս 1988-ին Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով ես աշխատանքի ընդունվեցի Մայր Աթոռում՝ Աստվածաշնչի արևելահայերեն թարգմանությունը համակարգչային հրատարակության պատրաստելու, որը լույս տեսավ 1994 թվականին: Դա Հայաստանում առաջին համակարգչային հրատարակությունն էր: Այսպես համակարգչային տեխնոլոգիաները մուտք գործեցին հրատարակչական ոլորտ՝ դուրս մղելով որոշակի գործառույթներ այդ բնագավառից:

Մինչ նյութին անցնելը, սակայն, եկեք ընթերցողների համար ճշտենք արհեստական բանականության սահմանումը, պարզենք՝ ի՞նչ է արհեստական բանականությունը:

Արհեստական բանականությունը (հետայսու՝ ԱԲ, ռուսերեն՝ искусственный интеллект — ИИ , անգլերեն — AI (Artificial Intelligence) — էյԱյ) մեքենաների կողմից տրամաբանական խնդիրները լուծելու կարողության վարքագծի դրսևորումն է: Համապատասխան ալգորիթմների միջոցով մեքենան օժտվում է մտածելու կարողությամբ՝ ալգորիթմի սահմանների ներսում: Վերջին 60—70 տարվա ընթացքում ԱԲ-ն աստիճանաբար կատարելագործվեց տեխնոլոգիական առումով, զարգացան համակարգիչների կառուցվածքային և մաթեմատիկական ոլորտները, և գնալով ԱԲ-ն պիտի հզորանա ու ներխուժի մադկային գործունեության գրեթե բոլոր ոլորտները: Օրինակ՝ 1997 թվականին Alfa go ալգորիթմով սուպերհամակարգիչ Deep blue-ն հաղթեց շախմատի աշխարհի չեմպիոն Գ. Կասպարովին: Ակամայից հիշում եմ իմ ուսանողական տարիներին (60-ականների վերջեր) շատ տարածված մի պատմություն Ա. Էյնշտեյնի մասին: Իբրև թե մի օր, երբ Էյնշտեյնը գրում էր իր հայտնի «Հարաբերական ընդհանուր տեսությունը», տեսիլքի մեջ նրան հայտնվում է Բելիարը՝ ասելով. «Ալբերտ, վերջացրո՛ւ, գնում ենք այն աշխարհ»: Էյնշտեյնն ասում է. «Մի օր ժամանակ եմ խնդրում, բան չի մնացել, ավարտեմ այս տեսությունը, հետո ուր ուզում ես, տար»: «Լավ»,— համաձայնում է Բելիարը: Հաջորդ օրը կրկնվում է նույնը. Էյնշտեյնը մեկ օր էլ է խնդրում, ավարտում է գործն ու սպասում Բելիարին: Բայց նա չի երևում. մեկ օր, երկու օր.... Եվ մի անգամ հանկարծ Բելիարը դարձյալ երևում է Էյնշտեյնին, ու նա հարցնում է. «Այս ո՞ւր ես, ինչո՞ւ չես գալիս, ես ավարտել եմ իմ տեսությունը....»: Բելիարը պատասխանում է. «Դու այլևս ինձ պետք չես: Շուտով, շատ շուտով կտեսնես, թե քո հավատարիմ ընկերներն ինչեր կանեն՝ կյանքի կոչելով քո հայտնագործությունները»: Այս ասելով՝ Բելիարն անհետանում է:

Ատոմային էներգիայի կիրառման սկզբնական ժամանակներն էին, երբ այդ միջոցով աշխարհը կլուծեր իր էներգետիկ բոլոր խնդիրները, բայց ստեղծվեց ատոմային ռումբն ու նետվեց մարդկանց գլխին: Նույն ճակատագիրն է սպասում նաև ԱԲ-ին, եթե այն վերածվի ինքնուրույն մտածող էակի, այսինքն՝ դուրս գա մարդկային հսկողությունից:



Բնական է, որ եթե ԱԲ-ն մտնում է քաղաքակրթական ոլորտ՝ արդեն ոչ որպես գործիք, այլ *«իրամանատար»*, ապա Եկեղեցին չի կարող անտեսել այդ փաստը: Տեխնոլոգիական սրընթաց զարգացման պայմաններում, երբ բացակայում է բարոյական առանցքը, և առկա չէ հավատը, մարդու ինքնությունը փոխարինվում է ինչ-որ արհեստական փոխարինիչներով, և կարելի է ասել, մտնում ենք ապոկալիպսիսի՝ վախճանաբանական դարաշրջան, որ նկարագրված է Հայտնության վերջին գլուխներում: Սանկտ Պետերբուրգի 10-րդ միջազգային մշակութային համաժողովում (2024 թ.) Կիրիլ Պատրիարքն այսպես արտահայտվեց. *«Եթե մարդկությունը կորցնում է հավատը, հատկապես ԱԲ-ի ներխուժման և տեխնոլոգիական զարգացման փուլում, ապա մենք իրոք մտնում ենք Հայտնութենական Վերջին օրերի շրջան»:*

Ընդհանուր առմամբ՝ ԱԲ-ն ներկայացվում է որպես ոչ մարդկային բանականություն, որը չափվում է մարդու մտավոր հնարավորությունների վերարտադրման իր ունակությամբ, ինչպիսիք են պատկերների, առարկաների ճանաչումը, լեզվի իմաստային ընկալումը, փորձի վրա հիմնված հարմարվողական ուսուցումը, տրամաբանությունը, ռազմավարությունների մշակումը, երևույթների մասին դատողություններ անելու ունակությունը, որոշումների կայացումը և այլն:

Անդրադառնալով ԱԲ-ի դասակարգմանը՝ նշենք, որ ներկայումս ընդունված է առանձնացնել ԱԲ-ի երկու մակարդակ՝ թույլ (նեղ) և ուժեղ (ընդհանուր)՝ կապված ԱԲ-ի կողմից մարդկային կարողությունների վերարտադրման աստիճանի հետ, սակայն գրականության մեջ հաճախ հանդիպում է նաև երրորդ մակարդակը՝ սուպերբանականությունը: Այս մակարդակները կարելի է դիտարկել նաև որպես ԱԲ-ի սերունդների զարգացման հաջորդականություն:

Թույլ ԱԲ-ն, որը հաճախ անվանվում է նաև արհեստական նեղ բանականություն, ԱԲ-ի համակարգ է, որ մշակված և պատրաստված է որոշակի խնդրի համար: Այն կարող է հավասար լինել, ինչպես նաև գերազանցել մարդկային կարողությունները որոշակի առաջադրանքների համար:

Ուժեղ ԱԲ-ն, որը հայտնի է նաև որպես արհեստական ընդհանուր բանականություն, ԱԲ-ի համակարգ է՝ մարդու ճանաչողական ունակությունների ընդհանրացումներով: Երբ ուժեղ ԱԲ-ին ներկայացվում է անծանոթ խնդիր, այն կարող է լուծում գտնել՝ առանց մարդու միջամտության: Նա համապատասխանում է մարդկային կարողությունների ամբողջ շրջանակին և կարող է հաջողությամբ իրականացնել ցանկացած մտավոր առաջադրանք, ինչը հասանելի է մարդուն:

Արհեստական սուպերբանականությունը կամ գերբանականությունը մեքենայական բանականություն է, որը գերազանցում է մարդու բանականությունը ցանկացած խնդրում:

Հաճախ ապագայի վերաբերյալ կանխատեսումներում հիմնական մտավախությունները կապված են հենց արհեստական սուպերբանականության հետ:

— Տե՛ր Ղևոնդ, որո՞նք են արհեստական բանականության վտանգներն ու օգուտները: Նոր տեխնոլոգիական հեղափոխությունները ո՞ւր են տանելու մարդկությանը:

— ԱԲ-ի հնարավոր ազդեցությունների մասին կարելի խոսել երկար, քանի որ մոտ ապագայում այն ներխուժելու է մարդկային գործունեության բոլոր բնագավառները: Եվ գրեթե բոլոր ոլորտներում առկա են թե՛ լավատեսական և թե՛ հոռետեսական միտումներ: Օգտակար կողմերը շատ-շատ են, որոնք տեսանելի են ամենուր: Սմարթֆոնի առկայությունը բավարար է: Կրոնական առումով ամենավտանգավորն այն է, որ ԱԲ-ն մոտ ապագայում համապատասխան ալգորիթմների զարգացման շնորհիվ բարոյական և էթիկական ոլորտներ է ներխուժելու: ԱԲ-ն զուրկ է ինքնությունից, անձնավորում չունի, ստեղծագործել չի կարող, չի կարող դուրս գալ այն սահմաններից, որ մարդու կողմից տրված են նրան:

Մի օրինակ բերեմ՝ Մարկ Տվենի կյանքից հայտնի մի դրվագ, որ կարելի է մարգարեական համարել մեր օրերի համար: Գրողներից մեկը մոտենում է Մ. Տվենին և ասում. *«Պրն. Տվեն, երեկ գնացի խմբագրություն՝ հոդվածիս հոնորարը ստանալու, տեսա, որ ցուցակում Ձեր անունն էլ է առկա, իսկ հոնորարի չափը երկու անգամ շատ էր, քան իմ հոնորարը: Բայց երեկոյան տանը տեսա, որ Ձեր հոդվածը երկու անգամ փոքր ծավալ ուներ, քան իմ հոդվածը, ինչպե՞ս կբացատրեք»:* Մ. Տվենը պատասխանում է. *«Մի՛ տրտմեք, երիտասարդ, դա նրանից է, որ իմ հոդվածի բառերի միջև երկու անգամ ավելի շատ կարդալու բան կա, քան քո բառերում»:*

Այո՛, ԱԲ-ն առայժմ չի կարող կարդալ տեքստի բառերի արանքում թաքնվածը, չի կարող զգալ Ջոկոնդայի ժպիտը և ինչ-որ կերպ այն նկարագրել մաթեմատիկական բանաձևերով: Զգացումները, սերը, բարոյական բազում երևույթներ ԱԲ-ի համար գոյություն չունեն: Թեև շատ մասնագետներ *«մարգարեանում են»*, որ մոտակա տասնամյակներում ԱԲ-ն կանձնավորվի և կկարողանա ինքն իրեն վերարտադրել՝ նման Ծննդ. Ա 28 համարում ասվածին:

Աստծո խոսքը ժամանակի հաշվարկ չունի, նա հավիտենական է, ինչպես ասում է Պողոս առաքյալը. *«Հիսուս Քրիստոս նույնն է երեկ, այսօր և հավիտյան»* (Եբր. ԺԳ 8): Այս առումով էլ, ինչպես անցյալ դարի կեսերին, երբ մարդկությունը տիրապետեց միջուկային զենքին, առաջացան վախճանաբանական (էսխատոլոգիական) կրոնական հոսանքներ (օրինակ՝ Սայենտոլոգիան, նրա հիմնադիր Լ. Ռ. Հաբբարդն իրեն հռչակեց Հիսուս և անմահության աղբյուր), այսօր էլ մեջտեղ եկան կրոնական նմանատիպ շարժումներ, որոնք իրենց աղոթքներն սկսում են՝ «Հանուն Հոր և Որդու և ԱԲ-ի» (Մատթ. ԻԸ 20-ի նման Սուրբ Հոգին փոխարինում են էյԱյ-ով՝ *into the name of the father and the Son and the AI*)»: Սակայն եթե Ադամը կարող էր բազմանալ և իր նմանին ստեղծել՝ որպես մարդու, դա հետևանքն է Ծննդ. Բ 7-ում ասվածի: Մի բան, որ Աստված չարեց կենդանական աշխարհի համար: Այսինքն՝ ԱԲ-ն առանց մարդու գերիշխանության դառնում է խիստ վտանգավոր՝ ապոկալիպտիկ:

Վերոնշյալ համաժողովում Պատրիարքն ավելացրեց նաև, որ սա կարող է ֆանտազիա թվալ կամ ինչ-ինչ հիպոթեզ, բայց կարելի է ենթադրել, որ ԱԲ-ն կդառնա *«արարիչ»* և իր նմաններին կվերստեղծի: Այսինքն՝ հենց որ ԱԲ-ն դուրս եկավ մարդու վերահսկողությունից, կլինի աշխարհի վախճանը: Դա չի բացառվում, քանի որ Հայտնության ԺԳ գլխի *«գազան»* բառը, պարզ է, բազմակի իմաստ կունենա և հետևաբար տարբեր մեկնությունների տեղիք կտա: Նա կարող է լինել և՛ մարդ, և՛ դև, և՛... ԱԲ (տե՛ս https://news-magazine.eu.com/patriarh-kirill-sravnil-ii-po-opasnosti-s-iadernoi-energiei.html):

Դա չի նշանակում, որ մենք պետք է մերժենք գիտության նվաճումները և հրաժարվենք ԱԲ-ի ծառայություններից, բայց այդ ամենը պիտի կատարվի մարդու խիստ վերահսկողությամբ:

— Հնարավո՞ր է նաև վիրտուալ քահանա լինի ԱԲ-ի տիրույթում:

— Այդ հարցն իր լուծումն է գտել շատ վաղուց: Երբ լրացավ Մարտին Լյութերի թեզիսների հրապարակման 500-ամյակը (2017 թ.), Վիտենբերգում Բողոքական Եկեղեցին տեղադրեց BlessingU—2 ռոբոտ-հովիվը, այսինքն՝ քահանան, որը, ChatGPT և այլ չատբոտեր օգտագործելով, պատասխանում էր բոլոր հարցերին, անգամ շատերը գլխի չէին ընկնում, որ զրուցում են ԱԲ-ի հետ: Այսօր աշարհում առկա են Alexa, Robo Rabbi, eRosary, SanTO և այլ չատբոտեր, որոնք գործում են Անգլիկան Եկեղեցում, Վատիկանում, անգամ մահմեդական աշխարհում (Muslim Pro):

Ժամանակակից տեխնոլոգիական զարգացումներն ապահովում են համացանցային բոլոր մուտքերը՝ զրույցներ, երգեր, ֆիլմեր, ամեն ինչ՝ սկսած հեռախոսային խոսակցություններից, գրանցելով և պահելով: Եվ չի բացառվում, որ շուտով ZOOM-ով դու խոսես և տեսնես քո իսկ հանգուցյալ մտերիմներին: Ավելին. որոշ մասնագետներ *«մարգարեանում են»*, որ գերեզմանների տապանաքարերը կփոխարինվեն QR-կոդերով: Կստեղծվեն QR գերեզմանոցներ, մարդիկ կայցելեն նրանց և հեռախոսով կզրուցեն ու կտեսնեն իրենց հանգուցյալներին:

Դարձյալ հիշենք Սողոմոնին (Ժող. Ա 2—11) և անդորյան վիուկի պատմությունը (Ա Թագ. ԻԸ գլուխ), երբ հայտնվում է արդեն մահացած Սամուել մարգարեն և զրուցում վիուկի հետ: Ուրեմն՝ ԱԲ-ն կարող է խոսել մեզ հարազատ անձի ձայնով, նրա կերպարանքն ընդունել: Այս առումով առանձնացնում եմ երեք *«երբեք»*.

- երբեք չվստահել on-line քահանաներին,
- երբեք թողություն չակնկալել նրանցից,
- երբեք չխոստովանել նրանց:

Լավ իմանանք, որ ամեն ինչ գրանցվում և հայտնի է դառնում ԱԲ-ին, այսինքն՝ ամբողջ աշխարհին:

Բաբելոնյան աշտարակաշինության նման (Ծննդ. ԺԱ գլուխ)՝ եթե ԱԲ-ն դուրս եկավ մարդու հսկողությունից, մի նոր աշտարակի շինություն կկառուցվի (Հայտ. ԺԳ գլուխ), որն արդեն Վերջին օրվա մոտալուտ լինելն է խորհրդանշում:

— Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝ Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիքի և մարդու միագոյությունը Եղիշե Չարենցի պոեզիայում

Ժամանակի չափումների մեջ Ե. Չարենցի հոգևոր կենսապատումը տեսլանում է և՛ որպես աներկրորդ գեղարվեստ, և՛ իր օրերի պատմությունը խորհրդանշող երևույթ: Դեմ հանդիման են հոգևոր պատմության սկիզբն ու վերջը՝ շաղկապված դժվարուղի մաքառումներով, գաղափարագեղագիտական վերաճշգրտումներով: Գրական խորհրդապաշտական մուտքը նաև հայրենական ապրումների ու մտածությունների ոգեղեն սկիզբն էր: Հայրենիքի որոնումի անորոշ ճանապարհին «կապուտաչյա սիրուհու» տեսիլքն է, նույն ցնորք Նաիրին՝ երազային, մշուշային հայրենիքը:



Երկիր Նաիրին՝ միացյալ Հայաստանը, Չարենցի համար սոսկ դավանանք չէր, նրա արյան, մտքի և հույզի զարկերակն էր, երբ մաքառում էր կամավորական ջոկատներում, հեղափոխական խանդավառ շարքերում, երբ գաղափարապես շեղված էր ի՛ր ճանապարհից, երբ մաիվան տեսիլով Գողգոթայի խաչն էր կրում: «Կապուտաչյա հայրենիք» պոեմում՝ գրված Կարսում 1915 թ., Չարենցը, նույնանալով ծննդավայրին, կարոտով տենչում էր իր «սիրուհուն»՝ իր երկրորդ կեսին՝ Արևմտահայաստանին՝ հավատով խոստանալով. «Կապուտաչյա սիրուհիս, ամուսնանանք պիտի մենք....»: Այդ ամուսնությունը, այսինքն՝ երկատված, երկփեղկված հայրենիքի վերամիավորումը, այդպես էլ չկայացավ: Դա մեր ազգային ողբերգությունն է, որ նաև Չարենցի անձնական ողբերգությունն էր: «Էլի ես որբ ու արնավառ՝ իմ Հայաստան-յարն եմ սիրում»,— սա արդեն Չարենցի երդում-պատգամն է՝ գրված 1920 թ.՝ Հայաստանի խորհրդայնացման նախօրեին:

«Կապուտաչյա սիրուհու» գաղափարը Չարենցի պոեզիայում հարակա է, որ կերպափոխվում է «Հայաստան-յար»-ի՝ երկու դեպքում էլ խորհրդանշելով հայրենիքի և բանաստեղծի միագոյությունը:

Հայրենիքի խանդավառ գալիքի հոգևոր տրամադրություններով կամավորական ջոկատների շարքում Չարենցը գնաց Արևմտահայաստան. «Կանչում էր, կանչում ճամփան անմեկին // Մեր հոգին ուներ թռիչքներ ու թև»: Սա «Դանթեական առասպել»-ի՝ որոնումի հոգևոր ուղիներին հաջորդած հողեղեն, իրական ճանապարհի սկիզբն է, որ աստիճանաբար ծանրանալու է չարչարանքի համատարած պատկերներով: Ցեղասպանության՝ մի ամբողջ սերնդի կենսազգացողությունը ցնցած հոգեհարվածը որքան էլ արտամղվելու ներքին ընթացք ունենար, Չարենցի մեջ մնալու էր որպես մշտառկա զգացողություն՝ տարիների հետ վերափոխվելով «ուղեղային մորմոքի», ուղեղային մորմոքն էլ՝ շարունակական մաիվան տեսիլների: «Դանթեական առասպել» պոեմը բանաստեղծի եղեռնված հոգեզգացողության գեղարվեստական ինքնարտահայտման սկիզբն է, արևելահայ գրական կյանքում եղեռնի պոեզիայի հիմնաքարը: Պոեմի ներքին տրամաբանությունն իր քնարական հերոսին հասցնում է կյանքի անիմաստության, տիեզերական զառանցանքի պատկեր-ապրումին.

Քայլել անիմաստ մի կյանքի համար,
Մարել — ու վառել աստղերը մարած,
Որ տիեզերքի զառանցանքը մառ
Չցնդի երբեք ու մնա երազ...

Զառանցանքի կենսազգացողության խոհն առկա է նաև նույն շրջանում գրված «Հարդագողի ճամփորդները» բալլադի եզրափակիչ տողերում. «Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես, // Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք...»: Բանաստեղծի հոգեգիտակցականը բեկած ցեղասպանության պատկերներն աստիճանաբար վերածվում են հիվանդագին մտապատկերների: Մաիվան տեսիլի հոգեբանական պատկերն ակնհայտ է: Ահա չարչարանքի տեսիլի հայտնությունը «Դանթեական առասպել» պոեմում.

Ամբոխվել էին տեսիլներն ահեղ,
Խեղերի նման ցատկում ու պարում
Եվ դառնում էին մեռելներ մի տեղ
Սատանայական տենդոտ շուրջպարում...

Հոգեբանական այս պահը դառնում է հոգեվիճակի պատմություն: Չարչարանքի տեսիլները վերակրկնվում են կյանքի ճանապարհին՝ ծայրահեղ բևեռացման հասնելով 1930-ական թթ. պայմաններում: Ազգային ողբերգությունը հիշողության մտասևեռումներով ու զուգորդություններով զառանցանքի գեղարվեստահոգեբանական համապատկերի է հասնում 1933 թ. գրված «Մաիվան տեսիլ» պոեմում: Ահա մի հատված, ուր «Դանթեական առասպել» պոեմի ծանոթ տեսիլի վերահայտնությունն է.

Եվ շուրջը նրա խարույկի, բոլորած մի
պար խելահեղ,
Ցատկոտում էին ու պարում ամբոխները
այն դիվահար...

Չարենցի մաիվան մտապատկերների մեջ որպես հոգեցնցումի հետևանքային զգայության մի պատմության՝ հավատակորուստի և ընդվզումի գեղարվեստական ուժեղ արձագանք՝ կարևորվում է «Վահագն» պոեմը: Պոեմը և՛ տագնապ է, և՛ ջղաձգում, և՛ ազգային գոյի կործանված հիմքերի ողբերգական վերապրում: Մաիվան տեսիլի բովանդակության մեջ, որպես հոգեբանական տարր, խուժում է նաև ծաղրի ու անարգանքի մտասևեռումը. «Տեսնում եմ ահա, // Որ ծիծաղում ու քրքջում են նրանք // Արնաքամ ընկած դիակիդ վրա...»: Հրդեհի աստծու ոգեկոչման, հրդեհ-կրակի հոգևոր տրամադրության շարունակությունն է նույն օրերին գրված «Աթիլլա» պոեմը՝ աշխարհակործան սպառնալիքի խորհրդանիշ պատմական հերոսի՝ Աթիլլայի նոր կերպավորումով ու ոգեկոչումով.

Հե՛յ, արևմուտքից մինչև արևելք
Պիտի հրդեհեմ ու քանդեմ հիմա՝
Ես — արքա՛, աստվա՛ծ, տենդ, դժոխք ու մա՛հ,
Ես — ճշմարտության խարազանը մերկ...

Ազգային ողբերգության տառապագին վերապրման բացահայտում են Չարենցի «Հատված» պոեմի մեջբերվող տողերը. «Մենք, լուռ, շվարե՛լ ենք... // Էն ով պիտի տա— // Երկիր իմ, թռիչք ու թևեր...»: Ցեղասպանության ականատեսի ներհոգեկան ուժեղ ցնցումին հաջորդած հոգեբանական տևական մորմոքի ուղղակի վկայություն են նաև «Չարենց-Նամե»-ի ներքոբերյալ տողերը, ուր պատումի հանգիստ եղանակը պայմանավորված է տառապանքի ճանապարհին իմաստնացած ոգու ինքնահաղթահարման ուժեղ զգացողությամբ.

Ես կարծում էի — այնտեղ,
Ռումբերի ահեղ որոտում
Կգտնեմ քո դեմքը լուսե:
Բայց գտա... դիակներ փայտե
Ու տեսա մի երկիր, որը դու
Լքեցիր խուժումից մեր սև,
Ու իջավ թախիծն հնամյա
Ու հոգիս ճնշեց, ճնշեց...

«Չարենց-Նամե»-ի վերոնշյալ տողերը հեղափոխական օրերի խանդավառությունը բեկող հիշողությունների պատկերն են նաև: Նախահեղափոխական շրջանում գրված Չարենցի «Աթիլլայի» և հեղափոխությանը նվիրված «Սոմայի» ու «Ամբոխները խելագարված»-ի հոգեբանական առնչությունն ակնհայտ է: Ազգային գոյության անորոշության մեջ որպես իր ժամանակի Նարեկացի՝ Չարենցը այդ օրերին տառապագին աղոթք է առաքում հեղափոխական հզոր տարերքին.

Վառիր երկիրս քո դեմ — մի կարմիր
կանթեղ,
Նետի՛ր ժպիտդ վերջին իմ ավե՛ր երկրին,
Տուր վերքերին նրա մառ, վերքերին
անդեղ,
Կարմիր ժպիտը քո սուրբ, քո՛ույր իմ, Սոմա՛,
կի՛ն...

Բայց եթե Նարեկացու աղոթքի տարակույսի մեջ ցոլարձակում է հույսի հեռապատկերը, Չարենցի դեպքում մնում է անհուսության դատապարտված նույն ողբերգական մտատանջությունը: Տերյանական վիատ տրամադրության նրբերանգներով 1919 թ. գրում է.

Կարմիր են գալիքի լույսերը ու մուգ են.—
Կարմիր են, կրակե,— բայց, ա՜խ, անամոթ են:
Եվ ո՞վ կկանչի նրանց, որ կյանքում այս
Մենակ են, տխուր են, տխուր ու անո՛ղ են...
Նվում է սրտիս մեջ ծանոթ մի մորմոք հին.—
Լույսերը հեռո՛ւ են, անփո՛ույթ են, անհո՛գ են...

Ազգային հոգեբանության մեջ որպես ողբերգություն բեկված կորուսյալ հայրենիքի ճակատագրի հարցում հեղափոխության բերած տարակույսները ոգեկեղեքման նոր դուռ են բացում բանաստեղծի համար: Մտատանջության այս փուլին բնորոշ զգայությունը կեսգիշերային անքնությունն է, ուղեղը շաղափող հեղափոխական աղմկոտ տարերքի զգայությունը. ➥ էջ 7

Արտավազդ Թումանյան՝ նկարիչն ու գեղագետը

Ծննդյան 130-ամյակի առիթով

Արտավազդի վերջին նամակը՝ հասցեագրված մորը, Վանից էր 1918 թ. մարտի 9-ին. «Դրությունը շատ անորոշ է.... նահանջը անխուսափելի է, և շա՛տ վատ նահանջ կլինի....»:

Վանի երկրորդ նահանջի ժամանակ վերջնապահ փոքրաթիվ խմբի կազմում 24 տարեկանում զոհվում է նաև Արտավազդ Թումանյանը: Բոթը Թումանյանին է հասնում 1918 թ. դեկտեմբերի 3-ի առավոտյան՝ «Հորիզոն»-ից. «Բեջարից Համադան տանող ճանապարհի վրա քյուրդերից սպանվել են դոկտոր Վարդանյանը, Միքայելյանը, Թումանյան Արտավազդը և օր. Սահակյանը»: «Բոլորը լուռ լաց էին լինում,— հիշում է Վահան Թոթովենցը: Թումանյանը նստել էր ճաշասեղանի առաջ և թափում էր դառն արցունքներ...»: «Այդ օրվանից՝ դեկտեմբերի 3-ից հետո,— հուշերում գրում է Նվարդ Թումանյանը,— հայրիկի սիրտը ասես ծածկվեց մի մեծ, անփարատ տրտմությամբ: Մինչ այդ, որքան էլ ծանրաբեռնված հոգսերով ու վշտերով, դեռ շարունակում էր և՛ հյուրեր ընդունել, և՛ հյուր գնալ, կատակում էր ու սրախոսում, բայց դրանից հետո էլ չէր կարողանում քողարկել ապրումները և սկսեց խուսափել դրսի մարդկանցից»:

Արտավազդը՝ Հովհաննես Թումանյանի չորրորդ զավակը, ծնվել է 1894 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում: Սկզբնական կրթությունն ստացել է Ստեփան Լիսիցյան մասնավոր վարժարանում, ապա ուսումը շարունակել Ներսիսյան դպրոցում, որը չի ավարտել: Նվարդ Թումանյանը եղբորը բնութագրում է այսպես. «հանգիստ բնավորությամբ, միշտ լուռ ու մենակ, բայց տխուր, մեծի նման լուրջ և մտախոհ»: Նվարդը հիշում է, որ 7—8 տարեկանում Արտավազդը ստվարաթղթի վրա կիպարիսների շարք նկարեց և նվիրեց հորը՝ նրա անվանակոչության օրը. «Հայրիկը հուզված էր, շատ հավանեց, դրեց գրասեղանին, թանաքամանի մոտ, նայում էր, ուրախանում»:

Տակավին փոքր էր, երբ ստեղծեց «Մախաթ» երկշաբաթաթերթը, որի խմբագիրն ինքն էր, իսկ Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին համադասարանցի Հայկ Պետրոսյանի հետ խմբագրեց «Թոթովանք» ձեռագիր հանդեսը, որտեղ զետեղվել են սեմինարիստների գեղարվեստական ստեղծագործությունները: «Հորիզոն»-ում էլ տպագրվել են նրա և եղբոր՝ Համլիկի ակնարկները գեղարվեստի մասին:

Գրական ընդգծված հակումներին զուգահեռ՝ նկարելու ձիրքը ևս վառ էր արտահայտվում Արտավազդի մեջ, և ծնողները նրան ուղղորդում են ժամանակի շնորհալի նկարիչ Եղիշե Թադևոսյանի նկարչական դպրոցը: 1910—1913 թթ. Արտավազդը հաճախում է Թիֆլիսի նկարչության և քանդակագործության ուսումնարանը: Այնուհետև նկարչական տաղանդը զարգացնելու համար 1913 թ. մեկնում է Մոսկվա, երկու տարի սովորում նկարչական մասնավոր դպրոցում, հաճախում Պյոտր Կելինի նկարչության դասընթացներին: Մոսկվայում ուսանելու տարիներին հանդիպում է Մարտիրոս Սարյանի հետ, որը նրան խորհուրդ է տալիս մեկնել արտասահման, իսկ Մոսկվայում աշխատել Յուոնի, Ռերբերգի և այլոց արվեստանոցներում: Նկարելու ձիրքն ու գրելու կրքոտ մղումը նրա մեջ խմորվում էին և՛ միաժամանակ, և՛ փոխլրացաբար. նկարչական արվեստն արտացոլվում էր Արտավազդի գրած պիեսներում ևս: Պատահական չէ նաև, որ պիեսների հերոսները հանճարեղ արվեստագետներ էին՝ Ռաֆայել, Լեոնարդո դա Վինչի, Ռուբենս և ուրիշներ:

Առանձնապես հետաքրքրված էր հունական ու ճապոնական արվեստով: Տարված լինելով համաշխարհային նկարիչներով՝ զուգահեռաբար ուսումնասիրում էր հայ նկարիչների կյանքն ու գործը: Հովհաննես Թումանյանին ուղղված 1912 թ. նամակներից մեկում կարդում ենք. «Սկսել եմ մի նոր աշխատություն՝ «Միջնադարյան հայ նկարիչները», ուր մտնում են, ինչպես վերնագրեցի, հայտնի միջնադարյան բոլոր հայ նկարիչները՝ իրենց մանրամասն ուսումնասիրություններով, որ դժբախտաբար մենք չունենք»:

Թումանյանն իր հերթին էր Արտավազդին խրախուսում ուսումնասիրել հայոց գեղարվեստը և ուղղորդում էր նրան. այդ մասին կարդում ենք Արտավազդ Թումանյանի՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին ուղղված նամակներում (խոսքը հայ մշակույթի նշանավոր գործիչ, հայագետ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, Լայպցիգի համալսարանի փիլիսոփայության դոկտոր Գարեգին Հովսեփյանցի մասին է): Հարգալից, սրտառուչ և հոգածու են նաև Գարեգին վարդապետի՝ Արտավազդ Թումանյանին հղված նամակները: Արտավազդին հասցեագրված մի նամակում Հովսեփյանցը հայտնում է «Պոլսից նկարիչ Թերլեմեզյանին Էջմիածին հրավիրելու և իրեն աշխատակցելու» մասին, ապա ավելացնում. «Եթե Ձեր ժամանակը կներե, կարող եք ինձ մոտ գալ և այդ զուտ մանրանկարչական աշխատանքներին ևս մասնակից լինել» (1.04.1912 թ.):

Մոսկվայում սովորելու ժամանակ, երբ ստեղծվում է հայկական հնությունները հովանավորող ընկերություն, Արտավազդը խանդավառությամբ է այդ մասին տեղեկացնում Թումանյանին. «Սարյանն ինձ զանգահարեց և խնդրեց շտապել իր մոտ: Ցույց տվեց մշակած, բայց դեռ չհաստատված կանոնադրությունը: Հայրի՛կ, սա մի վերին աստիճանի անհրաժեշտ և գեղեցիկ կուլտուրական ընկերություն է. կետեր կան, որոնք կան նաև ձեր ընկերության կանոնադրության մեջ — բայց միայն այս ընկերությունը կարող է կատարել, որովհետև գործի գլուխ են անցել էն տեսակ մարդիկ, որպիսին են Սարյանը, Մյասնիկյանը, Գևորգյանները, Արսեն Բուդաղյանը և այլք.... ➥ էջ 6

Արտավազդ Թումանյան՝ նկարիչն ու գեղագետը

➥ էջ 5

Ես համոզված եմ, որ մեր բոլոր վանքերը, խաչքարերը, նկարները, հնությունները կմաքրվեն մամուռից, կխնամվեն, և նույնիսկ հայը կգնահատի (թեպետ չի հասկանա) մեր էնքա՜ն գեղեցիկ ու նուրբ արվեստը» (20. 01.1914 թ.): Ի դեպ, խորապես հետաքրքրված էր նաև հայ ճարտարապետությամբ, ուսումնասիրում էր Լոռվա աշխարհի մի շարք հուշարձաններ և կազմում այդ տարածքների եկեղեցիների քարտեզը:

Մոսկվայում ուսանողական տարիներին Արտավազդ Թումանյանը նյութական ու կենցաղային մեծ դժվարություններ էր հաղթահարում, բայց դա չէր խանգարում, որ նա հափշտակված մնար արվեստով, ստեղծագործեր ու արարեր, հետևեր մեծ քաղաքի մշակութային կյանքին, աշխարհին նայեր արվեստագետի հայացքով:

Շուտով սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, և Արտավազդը վերադառնում է Թիֆլիս, զորակոչվում բանակ: Պարտադիր զինվորական ծառայությունից հետո կամավոր մնում է՝ աշխատելու Միջազգային Կարմիր խաչի համառուսական քաղաքների միության կովկասյան կոմիտեում: 1915–1918 թթ. աշխատում է այդ կոմիտեում, որի հիմնական խնդիրը պատերազմի հետևանքով տուժած բնակչությանն օգնություն ցույց տալն էր: Սկզբում Իգդիրում և Ջուլֆայում բացում են սննդատու կայաններ, ժամանակավոր իջևանատներ, բուժանիտարական կետեր: 1916 թ. նա նշանակվում է լիազոր ներկայացուցիչ Վանի շրջանում: Վանում եղած ժամանակ Արտավազդին նաև հնարավորություն է ընձեռվում մասնակցելու գիտնականներ Ն. Ադոնցի և Ա. Քալանթարի հնագիտական

արշավախմբի աշխատանքներին:

Շուրջբոլորն ավեր ու մահ էր, բայց Արտավազդը շարունակում էր ստեղծագործել՝ նկարել և գրել: Ընտանիքին հղած նամակների մեծ մասում խնդրում է ներկեր ուղարկել իրեն, ինչպես՝ «Ընկերս գալիս է Թիֆլիս, և խնդրում եմ նրա ձեռքով անպայման ուղարկեք պլաշչ (անձրևանոց-թիկնոց) և, եթե կարող եք, ներկեր….» (10. 11. 1916 թ.): Գաղթի, կոտորածի, սովի դժոխային իրավիճակներում նա անհագորեն որոնում էր գեղեցիկը: Քրոջը՝ Նվարդին հղած նամակներից մեկում գրում է. «Ապա թե իմանաս ինչ գեղեցիկ, սրբազան վայրերով եմ անցել. բավական է տամ Ավարայրի դաշտի անունը…. ինչ սքանչելի է…. Ապա Կարմիր գետը, Վարդանի և Ղևոնդի նահատակված տեղերը…. Հեր և Զարավանդ գավառները…. Էս դաշտերով, ճամփաներով ինչ թագավորներ, իշխաններ, ինչ դեմքեր են անցել…. Մնացել եմ զարմացած Ռաֆֆու վրա, թե ինչ վարպետորեն, ճիշտ և գեղեցիկ է նկարագրել ամեն մանրամասնություն, ինչ թափանցող աչքեր է ունեցել «էդ» անհանգիստ հոգին, ինչ զգացմունքներով է փայփայել իր ամեն մի գրելիք տողը» (02.03.1916 թ.):

Նամակներից մեկում էլ երեխայի ուրախությամբ գրում է հորը, որ նահանջի ժամանակ պատահականորեն փրկվել են նրա ուղարկած նամակն ու ներկերը. «Վերջապես քեզանից նամակ ստացա: Բայց սա բախտավորություն էր, որ ստացա: Նամակդ ու ներկերս սիրիական բեռների հետ ժամանեցին մեր նահանջի գիշերը. և, օ՜, բախտավորություն, երբ ամբողջ մթերքը և բեռները թողնում ենք Վան և նահանջում, պատահմամբ ազատվել են քո նամակն ու իմ ներկերը, որոնք միայն երեկ ստացա» (10.08.1916 թ.): Ուշագրավ է նաև այն, որ Արտավազդը հասցնում է ուսումնասիրել Աղթամար վանքի ձեռագրերը, որտեղ գտնելով Գրիգորիս Գեղեցիկի տաղերը՝ արտագրում է ընթեռնելի ձեռագրով և ուղարկում Հովհաննես Թումանյանին:

Ուշագրավ է, որ տան անդամների՝ Արտավազդին ուղղված շատ նամակներում արտացոլված են նկարիչների, նկարչությանն ու գեղարվեստին առնչվող նորություններ ու նյութեր, որոնք կհետաքրքրեին նրան. Օլգա մայրիկը գրում է Փանոս Թերլեմեզյանի, Աշխենը՝ Լեոնարդո դա Վինչիի բնօրինակ նկարների, Նվարդը՝ Թիֆլիսում կազմակերպված ցուցահանդեսի մասին և այլն: Նվարդի նամակում ընթերցում ենք. «Մի լավ նորություն. անցյալ կիրակի գնացինք հայ գեղարվեստի ցուցահանդեսի բացմանը. մի շատ սիրուն, հարուստ, գրավիչ ցուցահանդես. ճաշակով՝ ամեն ինչ, ներս գնացողը չի ուզում դուրս գա: Կատալոգը քեզ կուղարկեմ: Ինձ շատ դուր եկան Թադևոսյանի գործերը: Գյուրջյանը լավ բյուստեր ունի – ույժը, կրակը…. շատ լավն է, ինքն էլ արտիստ մարդ է, գնալու է Մոսկվա: Սարյանը քիչ բան է տվել: Թերլեմեզյանը շատ ունի և հաջող պորտրետներ ունի, ո՞ր մեկի մասին խոսեմ, ես շատ եմ ափսոսում, որ դու այստեղ չես, նույնիսկ նոր նկարիչների գործեր էլ կան: Ես քիչ էր մնում քո Վանա էսքիզները տայի ցուցադրելու, լավ կլիներ չէ՞, լավ գործեր ունես» (14. 02. 1917 թ.):

Աբասթումանից հղված նամակներից մեկում Հովհաննես Թումանյանն անթաքույց հպարտությամբ գրում է որդուն. «Դու ավելի շատ բան ես գիտակցել մեծ նկարիչների կյանքից, քան թե ամբողջ Աբասթումանը, որ շատ զարմացավ այդքան տեղեկություններիր վրա: Բայց ամենից լավն էն է, որ դու էլ լավ գիտես, որ ինչքան էլ մեծ տաղանդ ունենա մարդը, գիտությունը ու գաղափարները և տպավորություններն են, որ հարստացնում են նրան, ճոխացնում են, խորացնում են»:

Աշխարհը փոխելու, աշխարհը սիրելու մշտանորոգ ու գեղագետ հոգի էր Արտավազդ Թումանյանը, բայց եղերական իրադարձությունը, ավա՜ղ, ընդհատեց նրա ստեղծագործ ծաղկունքի ճանապարհը…

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ, հ. գ. թ.
«Հովհաննես Թումանյան» թանգարանի տնօրեն

Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գերագույն հոգևոր խորհուրդ հիմնելու մասին

Գևորգ՝ Հիսուս Քրիստոսի ծառա և Աստծու անհասանելի կամքով եպիսկոպոսապետ և Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Արարատյան համազգային նախամեծար Աթոռի՝ Առաքելական Մայր Եկեղեցու Սուրբ Կաթողիկե Էջմիածնի

Երուսաղեմի հայոց Ամենապատիվ պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանին, Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանին, Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի կենտրոնական վարչությանը, Գերաշնորհ առաջնորդներին, արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին, Արժանապատիվ հոգևոր հովիվներին, քահանաներին և ամենայն հոգևորականներին, թեմական խորհուրդներին, վարչություններին, հոգաբարձություններին և հայոց եկեղեցիների խորհուրդներին, Մայր Աթոռի հարազատ որդիներին՝ հայրապետական ողջույն և օրհնություն:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր բազմադարյան գոյության ընթացքում անսասան է պահել ժողովրդական ոգին և հայ ազգը, որ սփռված է աշխարհով մեկ՝ լցված ջերմեռանդ հավատով, հույսով և սիրով իր բազմաչարչար ազգային Եկեղեցու նկատմամբ: Այն ազատ և անկաշկանդ կամքով ընտրել է իր բոլոր պաշտոնյաներին՝ սկսած հայ ժողովրդի Հայրապետից մինչև Եկեղեցու վերջին սպասավորը, ինչպես նաև իր բոլոր վարչությունները, խորհուրդներն ու հոգաբարձությունները: Եվ դարավոր ընտրողական ու ժողովրդական ոգին և ուղղությունն այդ միշտ եղել են Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու միասնության խարիսխն ու կենսունակության աղբյուրը, ինչպես նաև ազգային մտավոր և բարոյական-կրոնական առաջընթացի հզոր հիմնապատճառը մեր ժողովրդի համար:

19-րդ դարասկզբին Հայաստանի երկրամասը, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ընկնելով միապետական Ռուսաստանի իշխանության ներքո, դժբախտաբար, թուլացան, և նսեմացան ընտրողական սկզբունքն ու ժողովրդական ոգին մեր ազգի մեջ՝ քաղաքական իշխանության ճնշմամբ և «Պոլոժենիե» կոչվող բարձրագույն կանոնադրության հաստատած սահմանափակումների պատճառով: Սա հասավ այն աստիճանի, որ Հայոց բարձրագույն հոգևոր իշխանությունը, տասնամյակներ շարունակ պայքարելով բռնությունների, հալածանքների և ժողովրդական Եկեղեցու և այլ ազգային հաստատությունների իրավունքների խախտման դեմ, ջանքեր գործադրեց՝ մեր ժողովրդի ազատ մասնակցությամբ և ընտրությամբ թեմական ժողովներ ու խորհուրդներ հիմնադրելու: Այդ պատճառով երջանկահիշատակ մեր նախորդ կաթողիկոսները՝ Տ. Տ. Մկրտիչ Խրիմյանը և Տ. Տ. Մատթեոս Իզմիրլյանը, Ռուսաց կենտրոնական կառավարության կողմից մեղադրվեցին հակապետական գործունեության մեջ:

1917 թվականի հեղաշրջմամբ Ռուսաստանի կառավարության բռնապետական լուծը թոթափվեց, որից հետո միայն հնարավոր եղավ և հաջողվեց Մեզ նույն թվականին այստեղ՝ Սուրբ Էջմիածնում, հրավիրել Ռուսաստանի հայոց հոգևորականության՝ թե՛ կուսակրոն, թե՛ աշխարհիկ (իմա՛ ամուսնացյալ) ներկայացուցիչների համագումարը՝ խորհրդակցելու և մեր Եկեղեցու բարեկարգման ծրագրերը մշակելու համար: Այնուհետև, մինչ Մենք մտածում էինք շտապ կազմակերպել ազգային եկեղեցական ժողով՝ հրավիրելով բոլոր կողմերից և թեմերից թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ պատգամավորների, որոնք ընտրված էին մեր ժողովրդից, դժբախտաբար, տեղի ունեցած իրադարձություններն ու ցավալի հանգամանքները, աղետաբեր պատերազմներն ու խռովությունները մեր երկրում խոչընդոտեցին՝ իրականացնելու Մեր ցանկալի մտադրություններն ու որոշումները: Դրա հետևանքով եկեղեցական-վարչական, կրոնական-ծիսական և բազմաթիվ այլ ազգային խնդիրներ ու բարեկարգման և բարեկարգման գործեր մնացին անորոշ վիճակում, սակայն Մեզանից պահանջում էին վերջնական տնօրինություն և շուտափույթ կարգավորում:

Արդ, նկատի ունենալով բոլոր հանգամանքները, ժամանակի պարագան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայմանները, ինչպես նաև խորհրդային իշխանության քաղաքական օրենքներով եկեղեցու անջատումը պետությունից, որով նախկին պետական կանոնադրությունը՝ «Պոլոժենիե», ուստի և Սուրբ Էջմիածնի Հայոց Սինոդը, արդեն իսկ կորցրել էին իրենց իրավական և բարոյական նշանակությունն ու ազդեցությունը, և հասկանալով, որ ներկայում անհնար է հրատապ հրավիրել Ազգային-եկեղեցական ժողով, որը լիազորված մարմին է և Հայ Առաքելական Եկեղեցու բարեկորգմանն առնչվող բոլոր գործերն ու խնդիրները ազատորեն տնօրինող՝ համաձայն մեր Եկեղեցու ավանդական կարգերի, և գիտակցելով, որ Մենք ևս ծանրաբեռնված ենք բազմաթիվ վշտերով ու դժվարություններով, նաև անհնար ենք համարում թողնել այդ բոլոր խնդիրներն ու գործերը անորոշ վիճակում՝ առանց սահմանման և վերջնական որոշման, նկատի առնելով նաև Մեր ստացած գրությունները՝ թե՛ Միաբանությունից, թե՛ Մայր Աթոռի արքեպիսկոպոսներից ու եպիսկոպոսներից, նույնպես և Մեզ ուղղված դիմումները՝ մեր թեմերի առաջնորդներից ու ականավոր ազգային գործիչներից, ուստի Մենք՝ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Հովվապետը, մինչ Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպումը, անհրաժեշտ և անհետաձգելի ենք համարում Մեր հայրապետական կոնդակով ժամանակավորապես Մայր Աթոռում հաստատել Գերագույն հոգևոր խորհուրդ՝ Սինոդի և մեր Դիվանի փոխարեն՝ համաձայն այս որոշման.

ա) Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը կազմված է Մեր նախագահությամբ և վեց փորձառու արքեպիսկոպոսներից ու եպիսկոպոսներից, որոնք են՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ, Տ. Խորեն և Տ. Բագրատ արքեպիսկոպոսներ, Գերապատիվ Տ. Գարեգին, Տ. Զավեն և Տ. Գյուտ եպիսկոպոսներ:

բ) Մեր բոլոր թեմերի առաջնորդներին կարգում ենք որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, և նրանք, գտնվելով այստեղ՝ Սուրբ Էջմիածնում, կամ անհրաժեշտության դեպքում հատուկ հրավերով ներկայանալով, մասնակցում են Գերագույն խորհրդի ժողովներին:

գ) Մեր բացակայության դեպքում Գերագույն խորհրդի ժողովները նախագահում է Մեր տեղակալը:

դ) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Հայաստանի և արտասահմանի եկեղեցիների ու թեմերի բոլոր կրոնական, վարչական և տնտեսական հարցերն ու գործերը քննարկվում են Գերագույն խորհրդում և ստանում վերջնական որոշում ու լուծում:

ե) Գերագույն հոգևոր խորհուրդը պարտավոր է, ըստ հնարավորության և հանգամանքների բերումով, արագացնել Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպումը՝ համապատասխան ժամանակին ստանալով Խորհրդային Հայաստանի իշխանությունների թույլտվությունը:

Ներկայացնելով այս հայրապետական կարգադրությունը ձեզ բոլորիդ, սիրելի՛ եղբայրներ և որդիներ, լիահույս ենք, որ դուք՝ բոլորդ, այս բացառիկ ժամանակահատվածում միշտ և ամենուր անխոնջ կերպով աջակից և զորավիգ կլինեք Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդին բոլոր այն գործերում, որոնք միտված են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և մեր մյուս ազգային հաստատությունների բարեկորգմանը, բարգավաճմանն ու պայծառությանը:

Օրհնելով ձեզ բոլորիդ՝ մաղթում եմ, որ Տերը պարգևի ձեզ իմաստություն և զորություն, որպեսզի ամենայն եռանդով և սրբությամբ ի կատար ածվեն ձեր բոլոր պարտականություններն առ Մայր Աթոռ, առ Հայաստանյայց Ս. Եկեղեցի:

Ո՛ղջ եղեք՝ զորացած Սուրբ Հոգու շնորհներով և հավետ օրհնված Մեր կողմից: Ամե՛ն:

ՎՇՏԱԼԻ ԳԵՎՈՐԳ Ե
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1 հունվարի 1924 թ.
Ըստ Տոմարի՝ ՌՅՀԳ (1373)
Մեր հայրապետության ԺԳ. տարում
Արարատյան Մ. Աթոռ Ս. Էջմիածին
Վաղարշապատ
Թ. 1

Գրաբարից փոխադրությունը՝
«Քրիստոնյա Հայաստան»-ի

Հայրենիքի և մարդու միագոյությունը Եղիշե Չարենցի պոեզիայում

➥ էջ 5

«Պայտերը դոփում են քունքիս մեջ հիմա.— // Անհայ՛ստ է աշխարհը՝ անցնում է ու մահ…»: Հայրենիքի ճակատագիրն անձնականացրած բանաստեղծի՝ հեղափոխության ճանապարհին ուղեկից տարակույսի դրաման հոգեբանական խտացման է հասնում «Ողջակիզվող կրակ» շարքի «Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ….» սկզբնատողով բանաստեղծության մեջ.

Եվ այս երգերը իմ կարմիր, ախ, այս
երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակում—
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ախ, այս
երգերը իմ կարմիր—
Իմ ավերակ, իմ ո՛րբ երկրում…

Տարակույսի դրամատիկ պահը բանաստեղծության մեջ ավարտվում է իրողության հայտնաբերման ողբերգական տրամադրությամբ. «Վերք է դառնում սրտիս խորքում օրերի փայլը այս հրակ, // Ա՜խ, սի՛րտ իմ՝ բո՛րբ ու անսփոփ,— երկի՛ր իմ՝ ո՛րբ ու անուրախ…»: Հոգևոր տրամադրությունը հասնում է մտածական լարման մի վերջնակետի, որից այն կողմ անկումի սարսափի հոգեվիճակն է: «Անկումների սարսափից» բանաստեղծությունը անկումին դեմ հանդիման կանգնած, նաիրյան խոց-խոհի, նաիրյան անդուռ կարոտի հոգեվիճակին դատապարտված բանաստեղծի ներքին մենախոսությունն է.

Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի.
Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի:

Բանաստեղծի խոհահուզական ապրումներն ի վերջո գաղափարական թանձրացման են հասնում «Հայաստանին» տաղում: Ժողովրդի պատմական ճանապարհի քննությունը հանգեցնում է փորձությունների ու ողբերգությունների անընդմեջ հաղթահարման ազգային ճակատագրի խոհափիլիսոփայությանը՝ «Հազար ու մե՛ վերք ես տեսել— էլի կտեսնես… // Աշնան քաղած արտի նման՝ հազա՛ր զոհերի // Չհավաքած բերք ես տեսել— էլի կտեսնես….», որից հետո գալիս է սիրո ու ցավի երկրի պաշտամունքի հոգեկան պահը, փառաբանության հոգևոր ծեսը, ինքնազոհաբերման աստիճանի ինքնանվիրումի խոստովանանքը. «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում….»:

Ամբողջ 1920-ական թթ. հայրենիքի կորուստի կասկածի խոհը շաղափում էր բանաստեղծի գիտակցությունը: Ազգային որոշակի քաղաքական ուղղվածության պատկանող իր հերոսների միջոցով Չարենցն անուղղակիորեն հայտարարում է ինքնությունը կեղեքող ներքին կասկածը.

Մտածում էր՝ «Բաղդադ են հասել
Զորքերը անսահման Ռուսի—
Էլ
Սրանք
Ինչո՞ւ են փախել
Բիթլիսից, Բաղդադից,Մուշից…
Էլ
Ինչո՞ւ
Էրզրումն առավ
Անհաղթ Անդրանիկ փաշեն…»:

Դարերի մեջ որպես արյունոտ հարցանիշ մեխված Նաիրիի կորուստի կասկածի խոհը խոշտանգող է Չարենցի այլ հերոսի՝ խմբապետ Շավարշի դեպքում. «Ոչխարների նման սարսափահար // Նրանք փախան ֆրոնտից, տվին Էրզրումը, // Հետո Կարսն, Ալեքպոլը…. վա՛յ ձեզ, հայեր…»: Հայրենիքի պատմության մեջ հեղափոխության ողբերգական հետևանքների գիտակցումը տեղիք է տալիս մահվան տեսիլների վերակրկնության:

Այդ տեսիլը Չարենցի խորհրդապաշտական գեղագիտական համակարգին բնորոշ տխրադալուկ աղջկա լուսե պատրանքը չէ կամ հոգու այլագոյությունը, մահը՝ «անգույն ու անբեր» կյանքին հակադրվող «լուսավոր առասպելը» կամ «անրջալույս տրտմությունը»: Տեսիլն այս դեպքում ոգու բերկրանքի ակնթարթ չէ, այլ չարչարանքի մղձավանջ, մահը՝ ազգային գոյության վախճանի ողբերգություն: Դարձյալ տիրապետող է հոգեցնցումի զգայության՝ ինքնախոշտանգող մեղքի ներքին խոհը՝ ուղղված այս անգամ իր դեմ, որովհետև ինքն էլ հեղափոխությամբ խանդավառվողների շարքում էր: Հեղափոխության այգաբացի լուսավոր սպասումը բանաստեղծության մեջ փոխակերպվում է «անկրակ իրիկնաժամի» և հայրենիքի կախաղանի մռայլ պատկեր-ապրումի: Հայրենիքի ճակատագրի պատասխանատվության տառապագին խոհը՝ «Գուցե այդ ես եմ, որ սրտով իմ լուսնահար // Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի», դառնում է ինքնազոհաբերության բարձրագույն վճիռ՝ հայրենիքի փրկության վերջին կամքով.

Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախված,
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան…

Որպես ներհոգեկան հարվածի զգայության մի փուլ՝ Չարենցի պոեզիայում առանձնանշվում է նաև ազգի պատմական անցյալի վերաքննությունը, ինչն այս դեպքում, բնականաբար, պետք է ընկալվեր որպես «անանցյալ անցյալ»: Անանցյալ անցյալի մտատանջությունը՝ որպես հոգեվիճակ, առկա է ոչ միայն «Պատմության քառուղիներով» պոեմում, այլև որպես կեսգիշերային անքնություն՝ «Դեպի լյառը Մասիս», «Զրահապատ «Վարդան Զորավար» պոեմներում:

Այսպես անցել ենք մենք անխոհ ու
անգաղափար
Պատմության քառուղիներով, որպես
միրաժ,—
Կտրել ենք երկար մի ճանապարհ,
Եվ ճանապարհը մեր այս
Ե՞րբ է արդյոք փայլատակել, օ՜, ե՞րբ,
Ե՞րբ է վառվել լույսով գալիքնափայլ…

Պատմության քառուղիներով անընդհատ խորացող ներքին հայացքը, ազգային ինքնաճանաչողության դառը խորհրդածությունները հանգում են «անխոհ ու անգաղափար» պատմական ճանապարհի վերջնակետին, ապագայի անհեռանկար դիմապատկերին.

Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Զարմանալի՜ թեթև, զարմանալի՜ անդեմ՝
Մերկության պես տկլոր ու անանցյալ…

Ռուսական կողմնորոշման չարենցյան ընկալումը ժամանակային որոշակի չափումով և անհատականացված դրամատիզմով առկա է ոչ միայն «Պատմության քառուղիներով», այլև «Դեպի լյառն Մասիս» պոեմում: Աբովյանի կյանքի անդուռ տարիների խորախոց խոհը՝ «Եվ չի՞ եղել արդյոք իր ողջունած հեռուն // Մի թիարան վատթար», Չարենցինն է նաև.

Օ՜, անպտուղ վաստակ ու տքնություն երկար,
Գոսն օրերում— ոգու հոգնություն եղկ,—
Անտեսնելի գալիք ու կապարե ներկա,
Անհորիզոն կյանքի կապարե երգ…
Մի՞թե սուտ է բոլորը և փորձանք…

Տարիների ստեղծագործական այս խոհերն ի վերջո ամբողջանում են «Մահվան տեսիլ» պոեմում՝ որպես զառանցանքի տեսիլային համապատկեր: Հիվանդագին չափերով սրված հոգեկան զգայությունները, ենթագիտակցության մեջ բեկված մտապատկերների գերսեղմվածությունը ոգու տեսադաշտ են բերում ազգային մտավոր հանճարի գալիք սպանդը: Ակնհայտ է «Դանթեական առասպել» և «Մահվան տեսիլ» պոեմների մղձավանջային հոգեճնշիչ պատկերների ներքին առնչությունը՝ առաջինը գրված ցեղասպանությունից անմիջապես հետո, երկրորդը՝ 1937-ից առաջ. «Եվ այն տեսիլը, որ տարիներից հառնած՝// Ծառացել է ահա իմ վարանոտ ու զարհուրյալ հայացքների դեմ…. // Այդ տեսիլը դժնի է ու ժանտաժանտ, անփայլ է ու գոսնական»: Կոտորածի զգայությունների ու զուգորդությունների հոսքը գիտակցության մեջ ծայրաստիճան լարվածության է հասցնում տառապագին մտասևեռումը՝ առարկայացնելով ուղեղը շաղափող արյան կաթկթոցի զգացողությունը. «Ցնծության ճիչեր խելագար, զառանցանք ու վիշտ խելահեղ // Ոսկորի ու մսի խրախճանք, երկաթի շռինդ ու շառաչ…»:

Ողբերգության տեսիլը պատմահոգեբանական խորհրդածություններով թանձրանում է «Որպես գորշ, դեղին տերևներ….» պոեմում. «Եվ չունե՞ք անգամ փոս դուք հիմա՝// Եվ օտա՛ր եք հայրենի հանդում»: Հոգեկան ծայրաստիճան գրգռված կացությունն արտահայտվում էր ոչ միայն գեղարվեստում, այլև կյանքում: Իր՝ Մարիանա Այվազյանի սպանության փորձի նախահոգեվիճակի առնչությամբ Չարենցը հիշում է. «Ես վախենում էի մենակ մնալ… Գիշերվա ընթացքում բնակարանում հնչող յուրաքանչյուր ձայն ինձ սարսափի էր մատնում: Այս ամենին գումարեք և այն, որ եթե ինձ հաջողվում էր քնել՝ այդ քունը անմիջապես փոխվում էր զարհուրելի զառանցանքի…. Я живу еще физически — но я уже труп. Я чувствую свое разложение. Я с ума схожу» («Ես դեռևս ապրում եմ ֆիզիկապես, բայց ես արդեն դիակ եմ: Ես զգում եմ իմ քայքայումը: Ես խելագարվում եմ»): Այս հոգեվիճակի բանաստեղծական պատկերն է 1935 թ. գրված «Զառանցանք» բանաստեղծությունը.

Ատամնաթափ մի մարդ, գանգը նման
կապկի,
Նստել էր կոկորդիս և ինձ խեղդում էր…
Թույն էր թորում նա իմ գիշերային շապկին—
Եվ անունը նրա… «Քնքշություն» էր…

Զառանցանքն այս դեպքում հոգեկան խաթարման երևույթ է, պատճառաբանված հոգեկան հետևանք: Հանճարեղության և խելագարության դրամատիկ ժամադրությունից չէր դա, այլ պատմական պահի ուժեղ վերապրումից: Ցեղասպանության մտասևեռումը Չարենցի մեջ ընդմիշտ մնաց որպես չհաղթահարված հոգեկան տագնապ: 1931 թ. հոգեկան ջղագրգիռ վիճակում Չարենցը նաև ինքնասպանության փորձ է արել նախ՝ ատրճանակով, ապա՝ զարկերակը կտրելով:

Ողբերգության դատապարտված մարդու մենության հոգեվիճակը տեղիք է տալիս ներքին բախումների ու հակասական տրամադրությունների: 1935 թ. Չարենցը գրում էր. «Լեցուն է սիրտս լացով…. // Ինձ խաբում, ինձ դավում են թերևը», մի օր հետո՝ «Պետությունն՝ ամբողջ իր ապարատով // Ելել է ահա… մի պոետի դեմ.— // Էլ ինչպես ես ինձ ահով չդիտեմ // Ու չհիանամ….»: Հեղափոխության «ըղձյալ այգաբացի» բանաստեղծական վառ պատկերը դառնում է «ցուրտ Հոկտեմբերի» անշող պատկեր: Տերյանի «Ցուրտ Հոկտեմբերն է ծեծում իմ դուռը» դրամատիկ խոհ-ապրումը՝ հեղափոխության ներքին իսկության ընկալումն ու վերապրումը, Չարենցի դեպքում դառնում է «Ցուրտ Հոկտեմբերն է գալիս….»: 1936 թ. գրված այս ռուբայիի մտավոր հալածանքի ու խեղված կյանքի զգայապատկերն է.

Ցուրտ Հոկտեմբերն է գալիս, ցուրտ
Հոկտեմբերն է գալիս,—
Ելլ, բանաստեղծ, հավաքի՛ր գիրք, և՛
հուշեր, և՛ խոհեր…
Ո՛չ բարեկամ կա կյանքում, ո՛չ թշնամի
անձկալի…
Ցուրտ Հոկտեմբերն է գալիս…

Մահվան մղձավանջը՝ հարսանիքի, ցնծության ու ծիծաղի զառանցական աղմուկ-տեսիլներով, համատարած է Չարենցի այդ շրջանի գործերում. «Թմբուկ են խփում, հարսանի՞ք է, // Հարսանիք է երկրում աշնանային— // Արշավում է անողոք գալիքը՝// Զգեցած զգեստներ մահի…»: Հաջորդ բանաստեղծության մեջ տեսիլը սաստկանում է ուղեղի մեջ պարս բռնած զգայական զարհուրելի պատկերի: Ստրկացված ամբողջ երկրի և բռնակալի պաշտամունքի ծես-առերեսման պատկերն է դա. «Ցնծություն է, ծիծաղ // Եվ <…> հարյուր հիսուն միլիոն մարդ // Կարուսել են նստել <….> // Եվ վերևում ժպտացող մի իդիոտ….»:

«Կարմիր» գույնը իշխող տրամադրություն է դառնում Չարենցի 1935—1937 թթ. բանաստեղծություններում՝ համալրվելով բովանդակային նոր շերտերով: Արյան գույնին ավելանում է արյան հոտը. «Հոտ է գալիս կրկին արյան // Այս վարպետի եփած ճաշից»: Արյան զգացողությունը աստիճանաբար խտանում, մարմնավորվում է որոշակի պատկերի մեջ, դառնում գործողություն-պատկեր.

Վաղ աղջամուղջն այնքա՜ն ըղձյալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ,—
Ուր մեր Արևն է նոր սուզվում արյունալի,
Որպես կարմիր գլուխ գլխատվածի…

Գլխատվելու մշտառկա հոգեվիճակը «Օ՜, մանկիկներ մեր լույս….» սկզբնատողով բանաստեղծության մեջ առարկայանում է՝ սպառնալով մի ամբողջ սերնդի. «Իսկ ձեզ համար նոքա արդեն սրում են սուր, // Որ մի գիշեր անլույս ձեզ գլխատեն»: «Կարմիրի», «կացնի», «գլխատումի» պատկերների տիրույթն ի վերջո ամբողջանում է կյանքի լույսը գլխատող դահճի կերպարով: «Միջնադարյան կացին» բանաստեղծության մեջ՝ գրված 1937-ին բանտում, ամբողջանում է կառափներով գահին տիրող և միջնադարյան սրած կացնով դահճի զարհուրելի կերպարը: Պատկերը մանրամասնվում է ահասարսուռ չափերով. «Նա մորթոտված գլուխների // Ուղեղներն է միայն ծամում»: Այդ դահիճը մեկ «Շահ Աբասի շառավիղ» է, մեկ՝ «թիֆլիսցի կինտո», մեկ՝ «զարհուրելի երևույթ՝ չեղյալ աշխարհում», մեկ՝«իբրև մի Նեռ՝ քաղցած, աչներ— ձեռքին կարմիր մի կացին»:

Այնուհանդերձ, այս ամենից հետո, իր արմատի և բունի աներկբա ու սթափ գիտակցությամբ, Չարենցը հաստատում է ազգային գոյի և ոգու անվախճանականությունը.

Ախ, քանի՜ անգամ բարձրացավ
Սև կացինը, որ ինձ զգետնե,
Եվ որքա՜ն ձգտեցին գտնել
Իմ երգի արմատները կարծր,—
Դիմացած քանի՜ հարվածի,
Եվ կրծքից, և՛ բնից խոցված—
Հայրենի ավյունով լցված—
Չընկտրեց և՛ ոչ մի կացին…

Չարենցի մահվան տեսիլների տրամաբանական վերջին հայտնությունը «Անվերնագիր» բանաստեղծությունն է՝ գրված 1936 թ.: Մահվան դեմ հանդիման կանգնած, մահվան տեսիլներով շարունակաբար կեղեքված բանաստեղծը, հպարտ և անպարտ ինքնությամբ, պատկերացնում է այն, ինչ լինելու է իր հետ հետմահու.

Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Որպես ընդհանուր աղետից սարսած՝
Զարմացած կգան ինձ այնքա՜ն մոտիկ
Եվ հանկարծ այնքա՜ն թանկ ու հարազատ…



Մարտիրոս Սարյան, «Եղիշե Չարենցի դիմանկարը», 1923 թ.

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բ. գ. թ.

Եղիշե Չարենց. Իմ լերան աղոթքը

(հատվածներ)

Նոյեմբերի 27-ը Եղիշե Չարենցի մահվան օրն է: 1937 թ. այդ օրը՝ Երևանի բանտում ամիսներ տևած չարչաչանքներից հետո, ավարտվեց հանճարի երկրային կյանքի ժամանակը: Չարենցը մեղադրվում էր այնպիսի հոդվածներով՝ «հակախորհրդային գործունեություն», «նացիոնալիզմ», «հակապետական գործունեություն» և այլն, որոնցով դատապարտվողները գնդակահարվում էին: Հնարավոր է՝ ոչ միայն դեղերից զրկելով, այլև մարմնական հաշվեհարդարով արագացրել են բանաստեղծի մահը:

Չարենցի ածյունն առայսօր հանգչում է անհայտության մեջ:

Քառասնամյա կյանքի քարն ուսերիս վրա,
Արարչական գործիս անագորույն կեսին
Հղում եմ Քեզ կրկին ահավասիկ ես իմ
Խոհն անտրտունջ երթիս՝ աղոթքը իմ լերան:
Քեզ, ո՛վ Բաշխող խոհի և շնորհող եռանդ,
Քեզ՝ Տվողիդ հանճար, և՛ ինքնություն, և՛ ձիրք. —
Դող՝ տարփուհուն պարող, շնորհք՝ բանաստեղծին,
Որ բարբառեն բանիվ և գեղգեղեն ձեռամբ…
Շնորհապարտ եմ, Տե՛ր, ինձ լիաբուռ ձոնած
Շնորհների համար և ձիրքերի անեղծ, —
Որ կոչեցիր երգիչ ու բանաստեղծ
Նվիրեցիր տավիղ և էվոլյան քնար…
Շնորհապարտ եմ, Տե՛ր, ես առավել սակայն,
Որ կոչեցիր Դու ինձ ոչ սոսկական քերթող, —
Այլև ասպետ, և պետ, և զինակիր,
Եվ սերմնացան աննինջ՝ դժնի ժամանակի:

* * *

Իբր ադամանդ մաքուր տառապանքով թրծած,
Պայծառացավ նա հար և կարծրացավ անվերջ, —
Հայրենական հողում որքան ապաքինվեց՝
Ստրկության դժնի կոշկոճներով քերծած: —
Ո՛վ Տեր, գիտե՛ս, որ այս հողն հոգևոր ցողող
Իբր հայրենի հողի վաղվաղակի մշակ —
Դեմքիս հազարամյա հալածանքի նշան՝
Հերկդ եմ հերկել խոսքի ադամանդյա խոփով…
Գիտես, որ հար՝ ելած նախքան լուսաստղը վաղ՝
Ինքս՝ ոգով անխոնջ լծված իբր համր եզ՝
Խոփն եմ քաշել խոհիս — և ինձ հենց ինքս, ես
Խարազանել խստիվ, որ չընթանամ դանդաղ, —
Եվ վաստակել եմ մինչ ուշ գիշեր խրթին,
Մինչև վերջին կաթիլն առօրեական ուժիս, —
Ապա քնել եմ ես դաշտում քնով ուշիմ
Որ լուսաստղից առաջ — կրկին ելնեմ երթի: —
Սակայն գիտես Դու, Տեր, որ ոչ ինձ լուծիդ
Ծանրությունն է ընկճել,
Ոչ զեփյուռը շնչով շոյել է դեմքիս վճիտ
Զովացուցիչ քրտինքը — իբրև բալզամ —

* * *

Օ, ո՛չ. — Դու չե՛ս լսել երբեք տրտունջը իմ
Ոչ հոգնության, ոչ չար հերյուրանքի հանդեպ.
Թեկուզ իջել են ծանր, օրհասական ամպեր
Իմ ուսերին խոնջած և անտերունչ շնչին…
Ինձ չի՛ ընկճել երբեք և ո՛չ մի ծանր քար,
Եվ ոչ մի սև կոշկոճ՝ ընկած խոփիս առջև. —
Ես չեմ շեղվել երբեք, — երբեք ետ չեմ դարձել
Ակոսներից երկար, և քարքարոտ, և դար: —
Ես չեմ շեղել երբեք հերկն հայրենի Խոհի, —
Եվ հանդուրժել, որ բյուր սերունդների հերկած
Հին գրքերում մնա անգամ չնչին մի քար՝
Նետված օտար ձեռքով, որ խարանե Ուղին…
Եվ մառախուղ, և մեգ, և կողմերից օտար
Հռնդալով թռչող ոչ ընչաշունչ քամի, —
Եվ վայրենի վրեժ դժնի բարեկամի,
Եվ ոսոխի ժանիք արյունոտած —
Հեղեղատներ՝ հանկարծ հայրենական հողի
Անդաստաններն համայն հեղեղատող, —
Չեն ընդհատել երբեք այս Տքնությունն անդուլ
Հազարամյա արյամբ սրբագործված Խոհի…

* * *

Եվ Դու, ով իմ Տեր, որ՝ չնայած անվերջ,
Անհատնելի, նորանոր, որոմային ձիրքով՝
Զարհուրելի կենսունակ, ինչպես անհուն ձեռքով
Աղետալի բեղմնությամբ ցանված որոմ անկեզ,
Յուրաքանչյուր անարատ բողբոջի կողքին,
Ահ, որպիսի ամեհի, անմարելի խանդով
Հռնդում են, բազմանում ու բազմանում անթիվ
Իրարամերժ սաղմերն այս սև — դժնի դժոխքի…
Եվ այն գիտես, ով Տեր, Դու, որ որոմն անցան՝
Սաղմն անմշակ այդ սերմի՝ հրի պես լափող, —
Ինչպես մորեխ ինքնակեր՝ զարհուրելի թափով
Բազմանալով, լափելով սերունդների անծայր:
Անխզելի տքնությամբ՝ հերկում միևնույն՝
Ամենօրյա, տվնջյան աշխատանքով ցանած
Բերքն անաղարտ, — խժռելով դեռ նորընծա կանաչ,
Անգամ արմատ ձգած պիրկ շյուղեր ինքնահուն, —
Հրկիզելով, խանձելով, իբր անխորհուրդ հրդեհ —
Հազարամյա մեր ցանի բերքն այսօրվա կանաչ, —
Հրկիզելով անգամ մեր երգն այսօրվա անհաս,
Ողջ կենսաբաղձ մի սերունդ՝ սեզ նորածիլ իբրև դեռ, —
Միևնո՛ւյնն է, ո՛վ Տեր, հանճարավոր անմահ, —
Ո՛վ ինձ խորհուրդ պարգևող և անխորտակ ոգի, —
Զրահավոր Քո տված իմաստությամբ՝ գիտեմ,
Որ՝ ինչպես բոց ինքնաչափ՝ ընդերքներին անմաս, —
Ինչպես երեկ, ինչպես միշտ՝ չգտնելով շուրջն իրենց
Հեշտ, դյուրակեզ ոչ մի շյուղ այլևս կենդանի, —
Լափլիզելու են իրենց զարհուրելի խանդով
Եվ մոխրացած՝ <....> հողն հայրենի:
Թեկուզ անինչ իմ ողին երբեմնակի բեկված՝
Թողած ակոս, թողած հերկ, թողած հազարամյա,
Անձկալի տքնությունն — իր հին, զառամյալ
Ողբն է հյուսել՝ սգալով կարոտն աներկբա, —
Շնորհակալ եմ, Տեր, ինձ շնորհած անմահ
Իմաստության համար այն՝ զրահավոր, որով՝
Կարողացել եմ տեսնել թե ծիլ, թե որոմ, —
Եվ սնել ծիլ բազմաթիվ՝ ուժերին անմարս…

* * *

Իմ հանճարի անցած չարչարանաց լերան
Եվ դժվարին, և դառն ճանապարհի կեսին —
Ահա հղում եմ քեզ խեղճ աղոթքը ես իմ, —
Ո՛վ Առաջնորդ ու Տեր հոգիներին մեր այն,
Որք — կկերտեն ոգով և որք «կերգեն ձեռամբ…»
....Ո՛վ Առաջնորդ ու Տեր ու մեծագույն վարպետ
Տիեզերքում սփռած բազմաբազում —
Եվ աշխարհում, կյանքում, և երազում
Մարմնավորված ոգի և կերպարանք տարբեր —
Յուրաքանչյուր չնչին սաղմնավորման անգամ
Զև ինքնություն տվող և ինքնության պատկեր, —
Արարչագործ կամքի ո՛վ անհատնում < ....>

* * *

Ոչ քաղցրություն եմ հայցում ես Քեզնից, Տեր՝
Իմ դառնության բաժակին խառնելու հաշիշ, —
Ոչ զորավիգ՝ տեգերի հանդեպ ամբարիշտ,
Որ ինձ խոցել են անվերջ և խոցոտում են դեռ, —
Ոչ բալասան եմ ուզում՝ վերքերին իմ սև,
Բազմաչարչար իմ մարմնին՝ զարկված ամենքից, —
Ոչ ստության, պղծության և քսության պիղծ
Նիզակներով ծակոտած իմ կողերին դեղ. —
Ո՛չ չեմ սարսում արտաքին և ոչ մի ուժից, —
Եվ ոչ դրսից ինձ դավեր նյութողներից նոր, —
Բարձր է անպարտ իմ ոգին և զրահավոր՝
Ամենայն ուժ արտաքին դարձնելու փոշի:
Ո՛չ ես հիմա, ոչ առաջ իմ վերքերի վրա
Ուժ չեմ հայցում, չեմ հայցել և չեմ հայցի երբեք, —
Իմ մարմնական տոգորման, ողջակիզման դեմ,
Ես — ինքս եմ իմ դեմ — ո՛վ Տեր, — հայցում զրահ….

* * *

Տո՛ւր ինձ կորով, տո՛ւր ինձ ուժ, տուր զորություն անկոր,
Տո՛ւր գիտություն սեփական սահմանների, խորքի, —
Տուր տեսություն անմշուշ աչքի, շնորհքի —
Անեզրական տքնությամբ, համբերությամբ, կամքով
Ալեկոծվող իմ ոգու, իմ հոգևոր խորքի,
Կենսահարույց ուժերի ակունքներից անտես
Պղպջացող, եռացող ջերմուկների պես
Դեպի արև խոյացող այս խաժադուժ զորքին —
Դեպի արև, դեպի կյանք, դեպ դաշնություն ու ձև,
Կերպավորման, դաշնության, բյուրեղացման ձգտող
Այս քաոսի խաժադուժ արշավանքի հանդեպ
Լինելու բարձր ու զգաստ՝ ոչ ենթակա ստրուկ, —
Այլ զորապետ ու արքա, սուվերեն ու տեր, —
Մոգ ինքնախոհ ու իոգ, ճարտարապետ կարող, —
Պատկերների Արքիմեդ՝ ընդդեմ բարբարոս
Հորդաների ներխուժման՝ թեորեմն իր լուծող դեռ:—
Ո՛վ դու, որ պետ ես կարգել ինձ՝ տարերքին անդեմ,
Կույր տարերքի ու նյութի տենդր կաշկանդող, —
Տո՛ւր զորություն լինելու, — ինքս իմ դեմ անդող,
Մութ ինքնությունը նյութի ձևով կաշկանդող —
Ով դու, որ վարպետ ես կարգել ինձ սկզբից ի վեր՝
Ճարտարապետ խոհերի, երազների, երգի, —
Գեղեցկության, դաշնության չեղյալ եզերքի,
Եղերական վարդապետ և
Տվե՛լ ես դու արդյոք ինձ՝ ձիրքից առավել,
Անգամ անհուն շնորհքից և հանճարից անգամ
Տասնապատիկ առավել կարևորը — կամք՝
Անեզրական երկունքով միայն տառապել…
Տվե՛լ ես ինձ զորություն անագորույն, դաժան՝
Չվարանել սաղմերի բեղմնավորման պահին
Չվարանել արյունից, սրածումից, մահից —
Հանուն ձևի ու խոսքի միակ սրբազան:
Տվե՛լ ես ինձ զորություն ստեղծագործ ոգուս
Զարհուրելի երկունքի հրաշագործ ժամին,
Երբ կայծակներ են ճայթում, և շաչում է քամին —
Ոգևորման սանձարձակ հողմն հզորագույն, —
Երբ ամեհի ու հախուռն ոգևորության
Անանց քամին է շաչում անտառներում ոգու,—
Եվ խոհերի կապտափայլ կայծակն է զարկում՝
Հրկիզելով անդունդներ բեղմնավորության, —

* * *

Ես չգիտեմ արդյոք կա՞մ աշխարհում մի այլ
Ստեղծագործ էակ, թեկուզ չնչին բացիլ, —
Իմաստագույն էակ կոչվող մարդուց բացի,—
Որ անխորհուրդ այսքան, այսքան շռայլ
Թե՛ առանձին, թե հետն իր նմանների բազում՝
Յուրաքանչյուրն ուրույն ճարտարության վարպետ, —
Այսքան անհուն, այսքան մրջյուններից տարբեր
Տնօրինի հանճարն ստեղծագործ, —
Այսքան անգետ մսխի իր ջեռացող ոգու,
Կայծակնացայտ մտքի, շնորհքների —
Օվկիանի նման անծայրածիր խորքի....

1937, մարտ

Աստուածաշունչ՝ գիրք գրոց

Իսկ դու հետևեցիր իմ վարդապետութեանը, իմ վարմունքին, կամեցողութեանը, հաւատին, համբերատարութեանը, սիրուն, համբերութեանը եւ այն հալածանքներին ու չարչարանքներին, որոնք պատահեցին ինձ Անտիոքում, Իկոնիոնում եւ Լիւստրայում. գիտես, թէ ինչպիսի՛ հալածանքների ենթարկուեցի, բայց Տէրն ինձ փրկեց այդ բոլորից: Եւ բոլոր նրանք, որ ուզում են աստուածապաշտութեամբ ապրել Քրիստոս Յիսուսով, հալածանքների մէջ պիտի լինեն: Իսկ չար եւ խաբեբայ մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան. իրենք մոլորուած՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին: Բայց դու հաստա՛տ մնա այն բանի մէջ, որ սովորեցիր եւ որին հաւատարիմ եղար. գիտես, թէ ումից ես սովորել, որովհետև մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ փրկութեան համար այն հաւատի միջոցով, որ Քրիստոս Յիսուսի մէջ է:

Պօղոս առաքեալի երկրորդ թուղթը Տիմոթէոսին, 3:10–15

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

- † Հղություն Ս. Աստվածածնի Աննայից — *9 դեկտեմբեր*
- † Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի, Մարուքե ճգնավորի և Մելիտոս եպիսկոպոսի — *14 դեկտեմբեր*
- † Ս. Դավիթ մարգարեի և Հակոբ Տյառնեղբոր — *23 դեկտեմբեր*
- † Ս. Ստեփանոս Նախավկայի և առաջին մարտիրոսի — *24 դեկտեմբեր*
- † Ս. Պետրոս և Ս. Պողոս առաքյալների — *26 դեկտեմբեր*
- † Ս. Որոտման որդիների՝ Հակոբ առաքյալի և Հովհաննես ավետարանչի — *28 դեկտեմբեր*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 10.03.2025 թ.
Տպաքանակը՝ 1265